

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1879 ԱՄԻՆ
ՆԻՍՏ ԺԶ.
25 ՅՈՒՆԿԱՐ 1880



Կ. ՊՕԼԵՍ

1880

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ա. ՊԱՐՈՆԵԱՆ, Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

11 ԳՐԱԴ-ԳԱՐԵՈՒ, Պատրիարքարանի փողոց 11

ՄԱՅՐ ԴԻՒՄՆ

Ստեփան փաշա Ասլանեան	Ա. Արեւաշատ
Տիգրան էֆենտի Եռասուֆեան	Բ. »
Յ. Մէրեքեմ-Գուլի էֆենտի	Գ. »
Մկրտիչ էֆենտի Մելիքեան	Ա. Արեւաշատ
Գասպար էֆենտի Չէրազ	Բ. »
Գարեգին էֆենտի Մելիքեան	Գ. »

Ձեռնաստրեան դիւան

Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ
Հովհաննէս Քահանա Մկրեան
Տիգրան էֆենտի Եռասուֆեան

Դաստիակութեան դիւան

Սէրվիլէն էֆենտի Արեւաշատ
Ռէթէոս էֆենտի Պէրպէրեան
Գասպար էֆենտի Չէրազ

Կալուածոց դիւան

Մինաս էֆենտի Գափամաճեան
Յովհաննէս էֆենտի Կրճիկեան
Աբիկ էֆենտի Ունճեան Արեւաշատ

Համարակալութեան դիւան

Ստեփան էֆենտի Փափաղեան
Քրիստոստուր էֆ. Ղազարոսեան Արեւաշատ
Համարձուժ էֆենտի Մազպուլեան

Երևանի յանձնախումբ

Քրիստոստուր էֆենտի Ղազարոսեան
Ղազար էֆենտի Հովուեան
Սարգիս էֆենտի Գափուճեան
Մկրտիչ էֆենտի Մելիքեան

Յարաբերութեան դիւան

Մկրտիչ էֆենտի Լաւեան Արեւաշատ
Բարսեղ էֆենտի Հալաճեան
Պողոս էֆենտի Պառնասեան

Իրաւաստրեան դիւան

Ներսէս վարդապետ Ասլանեան
Առաքել էֆենտի Այթուհ-Տիւրքի Արեւաշատ
Նշան էֆենտի Օտեան

Նախաձեռնութեան դիւան

Տօթթու Ռափաէլեան էֆենտի
Յ. Մէրեքեմ-Գուլի էֆենտի Արեւաշատ
Միհրան էֆենտի Չօպանեան

Խմբագրութեան դիւան

Կարապետ էֆ. Խլիւճեան Արեւաշատ
Գարեգին էֆենտի Մելիքեան
Համարձուժ էֆենտի Ալաճաճեան

ԲԱՅՈՒՄ 1879 ԱՄԵՆ

Ն Ի Ս Տ ԺԶ.

25 ՅՈՒՆԻՍԻՐ 1880

Ն'ԱԽԱԳԱՀ. — Ամեն. Տ. Ներսէս Սրբազան Պատրիարք

ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան էֆենտի Եռասուֆեան

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

Ա. Վ. իմակ

- 1 Կարապետ Եպ. Սերոբեան Բ. Պ
- 2 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ. Պ
- 3 Սիմոն Եպ. Սէֆիւրեան Բ. Պ
- 4 Կարապետ Գ. Սէթեան

Բ. Վ. իմակ

- 5 Մաթէոս Եպ. Իզմիրեան
- 6 Պողոս Վ. Խօրտաճեան
- 7 Յովհաննէս Գ. Մկրեան Բ. Պ
- 8 Գրիգոր » Աճէմեան

Գ. Վ. իմակ

- 9 Վահան Վ. Տ. Մինասեան
- 10 Յակոբ » Ա. Փափաղեան Բ. Պ
- 11 Կահակ Գ. Տ. Սարգսեան Բ. Պ
- 12 Խորէն » Փէշիւլեան

Գ. Վ. իմակ

- 13 Ներսէս Վ. Ասլանեան Բ. 4
- 14 Սուքիաս Գ. Ստեփանեան Բ. 2
- 15 Յարութիւն Սերոբեան Բ. 4
- 16 Վրթանէս » Պալեան Բ. 4

Ե. Վ. իմակ

- 17 Խորէն Արք. Նար Պէյ Բ. Պ
- 18 Յովհաննէս Վ. Փափաղեան
- 19 Գարեգին » Թաթարեան
- 20

Բ. Բացակայութիւն առաջին :
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ :
Բ. 3 Բացակայութիւն երրորդ :

ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

(Ա. Վ. իմակ)

Գումգաբու, Կետիկ փաշա

Եւ Գումգաբուի դուրս

- 21 Գրիգոր Պէրպէրեան Բ. Պ
- 22 Գէորգ Ստիվարճեան
- 23 Խաչիկ Մանկասարեան Բ. 12
- 24 Կարապետ Աղարդմաճեան Բ. 2
- 25 Համարձուժ Մազպուլեան Բ.
- 26 Մինաս Գափամաճեան
- 27 Յովհաննէս Պոյաճեան Բ. Պ
- 28 Ն. Մէզդուրեան Տօթթու
- 29 Պողոս Պառնասեան

Բ. Վ. իմակ

- 30 Սարգիս Աղարէկեան Բ. Պ
- 31 Սահակ Ապրօ
- 32 Սենեքերիմ Մանուկեան Բ. 12
- 33 Բարթոլ Քիւրքճիպաշեան
- 34 Ատովմ Տէրոյէնց Բ. 5
- 35 Գէորգ Ապառաւիշեան
- 36 Յ. Մէրեքեմ-Գուլի
- 37 Աւետիս Կիրտաղեան Բ. 2

(Բ. Վ. իմակ)

- 38 Անդրանիկ Կրճիկեան
- 39 Ալիքսան Խօրտաճեան Բ. 8
- 40 Բարսեղ Հալաճեան Բ.

Գեղիկաշ

- 41 Մկրտիչ Քիւրքճիպաշեան Բ.
- 42 Սեպուհ Մազառուտեան Բ. 8
- 43 Մարուզէ Յրէնկեան
- 44 Պողոս Էնքաճեան

Ի Կալիստար Ս. Խաչ

- 45 Սիմոն Ֆէշիկեան
- 46 Ստեփան Ասլանեան

47 Յ. Շիշմանեան Տօթթու Բ. Պ

48 Իսկիւտար Ս. Կարապետ

- 49 Միհրան Պահճէպաշեան Բ. 2
- 50 Պողոս Թորգոմեան Բ.
- 51 Նիկողոս Ալաճաճեան
- 52 Տրդատ Կապաղեան

(Գ. Վ. իմակ)

- 53 Գասպար Չէրազ
- Բերա
- 54 Աբիկ Ունճեան
- 55 Գրիգոր Սէլիմէճեան
- 56 Գրիգոր Օտեան Բ. Պ
- 57 Սէրվիլէն
- 58 Ռափայէլեան Տօթթու Բ. 5
- 59 Միքայէլ Մօմճեան Բ. 2
- 60 Կարապետ Քաղաղեան Բ.
- 61
- 62

Միքայէլ

- 63 Յակոբ Նորատուհնեան Բ. Պ
- 64 Տիգրան Եռասուֆեան
- 65 Մկրտիչ Գաղանճեան Բ. Պ
- 66 Աւետիս Գօրիսեան Բ. 7
- 67 Նշան Օտեան Բ.

Պէյգօզ Եւ Ղալափա

- 68 Միքայէլ Մաթիկոնեան Բ.
- (Գ. Վ. իմակ)
- Հուզղուհնուգ Եւ Իմատիկ

- 69 Յովհաննէս Լաւեան Բ. 8
- 70 Ստեփան Պէշիկճեան Բ. 4

Գատըգիւղ	ԳԱԽԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ	Մուշ
71 Կարապետ Շահպաղեան Բ 9	Կարին	121 Ստիան փոխադեան
72 Մկրտիչ Մուրատեան Բ 8		Տիվրիկ
Նարլըգաբու	101 Սիմոն Մագսուտեան Բ 9	122 Նշան Գարադաշ Բ 2
73 Յակոբ Եղմէնիճեան	Քեօբանեա	Ջէյրուն Եւ Մարաշ
Եհնիմանալիկ Սամաթիոյ	102 Մ. փոխադեան Տօթթօր	123
74 Պօղոս Մկրտիչեան Բ 4	Անդրիանուպօլիս	Տրապիզօն
Թօփգալիու	103 Վիչէն Ապաուլլաճ	124 Տիգրան Տ. Ներսէսեան Բ 9
75 Յովհաննէս Մարգարեան	Նիկոմիդիա	Պաղատ
Էյուսպ Ս. Եղիա Եւ Ս.	104 Կ. Ս. Իւթիւճեան	125 Մէլքօն Իսկէնտէրեան Բ 10
Աստուածածին	Ակն	Տիգրանակերտ
76 Գարեգին Յ. Մէլիքեան Բ	105 Աւետիս Պարոնեան Բ	126 Միհրան Զօպանեան Բ
Գուրուբէշմէ	Ղարամիսար	Վան
77 Աստիա Իկիտպաշեան Բ	106	127
Հիսա Եւ Պօյաճի գիւղ	Արաբկեր	Աղբամա
78 Յովհաննէս Արշակունի Բ Պ	107 Կարապետ Խաչիկեան Բ	128
Նոր գիւղ Եւ Սրէնիա	Բաղէշ	Հալեպ Եւ Այնքապ
79 Ղազար Հովուեան Բ	108	129
Պալատ	Պուսա	Սեբաստիա
80 Մկրտիչ Գ. Էսաեան Բ Պ	109 Քրիստոստուր Ղազարոսեան	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
81 Յովհաննէս Կրչիկեան	Եւդոկիա	Ռուսնուխ
82 Տեւմաթ Էնքօթէճեան	110	131
Քարակեօմրիսիկ	Ամասիա	Կարս
83 Սեպուհ Թիւրապեան	111 Համբարձում Ալաճաճեան	132 Աբրահամ Յ. Սյուլադեան
84	Բալու	Զմշկածագ
(Եւ Վիճակ)	112 Յովհաննէս Աղնաւորեան Բ Պ	133 Համբարձում Սարըքէշիճեան
Սամաթիա	Եղեսիա	Գաղատիա
75 Ալեքսան Պէշիբեան 11	113 Յակոբ Իւթիւճեան	134
88 Եղիազար Մէլիքեան Բ	Մանգրլիս	Ատանա
86 Մինաս Ճաֆճաֆեան	114	135
88 Նազարէթ Շահպաղեան Բ	Հանքն	Սոլեյ
89 Յարութիւն Թիւլեան Բ	115	136 Մատթէոս Ալեքսանեան Բ
90 Յակոբ Արշակ	Երզնկա	Եօղսատ
91 Սեպուհ Թիւրապեան	116 Ռէթէոս Պէրպէրեան Բ	137 Լօղօֆէթ Պալօղեան Բ
92	Թէրիքտաղ	Մալաթիա
93	117 Տիգրան Գ. Սինանեան	138 Գէորգ Վարդանեան Բ 2
94	Կեռաթիա	Եզմիր
Խասգիւղ	118 Գէորգ Գըլքեան	139 Պապի Պապօեան Բ
95 Առաքել Ալթուն Տիւրքի	Խարբերդ	Եզիպտոս
96 Ռէթէոս Պէլիկեան Բ 2	119	140
97 Սարգիս Աբրահամեան Բ 10	Պալքեներ	
98 Մ. Արծրունի Տօթթօր Բ 7		
99 Սարգիս Քալուքճեան Բ Պ		
100 Աթանազիոն Արապեան Բ 11		

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա. Տեղեկագիր Մայր Գիւանի ի վերայ 57 անդի խնդրոց ,

1. Առաջարկութիւն իբէկճեան Էֆէնտիի հին պարտուց մասնակի վճարման համար շնորհակալութեան քուէ տալու :
2. Առաջարկութիւն խառն ժողովոյ վանականաց գոյից յետ մահուան վանքին մնալու մասին :
3. Հարցում Սյուլեմանեան Էֆէնտիի առ Քաղ. ժողովն , պանդուխտ աղգայնոց աղգային տրոց մասին :
4. Առաջարկութիւն Քափամաճեան Էֆէնտիի երեսփոխանական ընտրութեանց հոկոյ Յանձնաժողովոյ նկատմամբ :
5. Հարցում խառն ժողովոյ իւր մեծամասնութեան նկատմամբ :
6. Բողոք երեսփոխանաց՝ Երզնկայի Առաջնորդ Սէլաթեան Տ. Գրիգորիս Եւ պիսկոպոսի դէմ :
7. Աղբսագիր պանդուխտ Տիվրիկցոց :
8. Առաջարկութիւն Ատենապետ փաշայի Արքեպիսկոպոսաց , Եպիսկոպոսաց Եւ վարդապետաց նկատմամբ :

Բ. Բողոքագիր Տիգրանակերտի դադարեալ Առաջնորդ Տ. Փիլիպպոս Եպիսկոպոսի :

ԱՅԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

առժամեայ Նախագահ Նշանակած է զՏ. Մատթէոս Եպիսկոպոս Եղիշեան , առեանը քաջաւ ժամ Տ ին Նորին Գերապատուութեան Նախագահութեան ներքեւ՝ ի ներկայութեան 35 երեսփոխանաց , որոց թիւը 43ի յանդեցաւ ի վերջէ :

Ատենապետ Էֆէնտին յայտարարելով թէ՝ Ամեն. Սրբազան Պատրիարքն իւր անձնական տկարութեան եւ օգին զրտութեան պատճառաւ չի պիտի կրնայ այսօր Խորհրդարան իջնալ եւ ժողովին նախագահել , եւ թէ իւր կողմէ

4.

Խնդիր առժամեայ փոխադրութեան
խորհրդարանի

(Միջադէպ)

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Պահ մ'առաջ Ատենապետ էֆէնտի ըրած յայտարարութենէն տեղեկացանք թէ Ամեն. Սրբազան Պատրիարքն անձամբ տկար, եւ օգն ալ ցուրտ ըլլալուն պատճառաւ՝ այսօր ժողովէն բացակայ գտնուելու հարկադրեալ է։ Ես ալ թէ անձամբ տկար եմ եւ թէ ծեր, եւ ձմեռնային այս ցրտաշունչ եղանակին մէջ՝ այս ընդարձակ տեղը գումարուիլ ամենուս ալ անձնական առողջութիւնը չնկեր, ուստի հարկ է այս մասին տնօրէնութիւն մ'ընել, եւ զէթ առժամանակեայ կերպով ժողովոյ նիստերը Պատրիարքարանի շէնքին մէջ կատարել, մինչեւ որ եղանակին խտուրթիւնը մեղմի։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Զեր գիտողութիւնն իրաւացի է, ստուգիւ այս ցուրտ եղանակին այս տեղ գումարուիլ եւ աշխատիլ ամենուս ալ առողջութեանը մնասաբեր է, ուստի ժողովն եթէ կը հաճի՝ կրնայ այս կէտը խնդրոյ նիւթ ընել եւ պէտք եղած տնօրէնութիւնն որոշել։

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Ես կառավարեմ մինչեւ փետրվար ամսոյ վերջ՝ ժողովոյ գումարումները Պատրիարքարանի մէջ կատարել։

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես ալ համամիտ եմ այս մասին. արդէն վերջնութեւն նիստը Պատրիարքարանի մէջ տեղի ունեցաւ, եւ արգելք մը չեմ տեսներ որ գումարումներն հոն շարունակուին քիչ մ'ատեն։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս յայտարարեցի, իրաւացի են ձեր գիտողութիւններն, միայն

թէ երբ որոշէք այժմէն այս տեղափոխութիւնը կատարել, եւ ուզէք անմիջապէս պատրիարքարանն երթալ գումարուիլ, գոնէ ժամ մը պէտք է այս տեղափոխութեան համար, մինչդեռ ժամը 8½ է այժմ, եւ այլ եւս միջոց չմնար նիստը շարունակելու։ Ուստի եթէ պատշաճ կը դատուի, նիստը կը դադարեցնենք այսօր, եւ յառաջիկայ շաբթու կամ տասն եւ հինգ օրէն կը գումարուինք Պատրիարքարանի մէջ։

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Այս նիստը պէտք է շարունակել, առանց տեղափոխութեան, եւ յառաջիկայ գումարումները կատարել Պատրիարքարանի մէջ։

ԶԱՅՆԵՐ. — Շատ աղէկ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն այժմ ժողովին կամաց կը դիմեմ, եւ կը հարցնեմ թէ կուզէ՞ այսօր ատենանք շարունակելու պայմանաւ այսուհետեւ գումարումները Պատրիարքարանի մէջ կատարել ցվերջ փետրվար ամսոյ։

Եւ հետեւապէս Ատենապետ էֆէնտին խնդիրը քուէի կը դնէ, եւ ժողովը միաձայն ԿՈՐՈՇԷ ցվերջ փետրվար ամսոյ գումարումները Պատրիարքարանի մէջ կատարել, շարունակելով այսօրեայ նիստը։

2.

Վաւերացումն Ժ. Գիստի տտեւագրութեան

Ատենապետ էֆէնտին ի գիտողութիւն կը հրաւիրէ զՆրեստիոսան՝ ժողովոյ Ժ. Նիստի ատենագրութեան վրայ, սակայն որ եւ է գիտողութիւն տեղի չունենար, հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կ'ենթարկէ նոյն ատենագրութիւնն, եւ ժողովն միաձայն ընդունելով զայն՝ ԿԼ ՎԱԻԵՐԱՅՆԷ անփոփոխ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը մնայ այժմ վերջին

Ժ. Նիստի ատենագրութեան վաւերացումն. այս ատենագրութիւնը, Տեարք, խմբագրեալ պատրաստ է եւ տպագրութիւնը գոնէ աւարտած, ահաւասիկ տպագրեալ թերթերն Դիւանիս սեղանին վրայ կը կենան, սակայն զանազան պատճառներով չէ կրցած ամբողջանալ գործը եւ հրատարակուիլ։ Ատենագրութեան տպագրութեան խնդիրն այլ եւ այլ կէտեր ունի, որոց բացատրութեան մէջ չուզեր մտնել Դիւանն, այլ զայս միայն կը փութայ յայտարարել թէ պէտք եղած միջոցները տնօրինած է ատենագրութեան հրատարակումը կանոնադրելու համար, եւ կրնայ հաւատարմ ձեռք թէ այս յայտարարումները չի պիտի կրկնուին այլ եւս։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես տպագրապետն տեղեկութիւն ուղեցի այս մասին, որ յայտարարեց ինձ թէ՝ ատենագրութեան ձեռագիրն դեռ այս երեքշաբթի իրիկուն յանձնուեր է իրեն, եւ որպէս զի կարենայ այդ կարճօրեայ միջոցին մէջ տպագրութիւնն աւարտել ժամանակին, իւր գործաւորաց թիւն աւելցուցեր եւ ձեռնարկեր է գործի, սակայն ի վերջէ՝ Ատենագրութիւնն տպարան գալով զեկուցեր է որ ատենագրութիւնն ետ թողուած է, եւ այսպէս կ'իստատ մնացեր է գործը։ Այս իրողութենէն յայտնի կերեւի որ Դիւանագրութիւնը զանցառութեամբ ձեռագրին մնացորդը չէ հասուցեր, եւ Ատենագրութիւնն ալ իւր կողմէ անփոյթ գտնուելով այս մասին՝ յետաձգեր է տպագրութիւնը։ Եւ օտուգիւ անփութութեան արդիւնք է որ Դեկտեմբեր 14ի Նիստի ատենագրութիւնը չկարենայ համիլ մինչեւ Յունվար 25։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ես յայտարարեցի կանոնաւ թէ Դիւանն աւելորդ կը համարի այս յետաձգմանց պատճառներուն բացատրութեանը մտնել, որ բազմազան են, եւ յարեցի նաեւ որ պարտ ու պատշաճ կարգադրութիւններն ստանաւ եւ ստանաւ են ապագային համար։ Եթէ ժողովը կը գոհանայ այս յայտարարութեամբ, խնդիր չմնար, եթէ ոչ՝ պատրաստ է Դիւանը պէտք եղած տեղեկութիւնները հաղորդել ձեռք, եւ բացատրել թէ՛ ինչ արգելքներու ներքեւ կը գտնուի ատենագրութեանց հրատարակման գործը։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ժողովն իւր այս տեսակ գործերը տնօրինելու համար ելեւմտից Յանձնախումբ մ'անուանեց, որու անդամոց մին ալ ես եմ, բայց ինչ օգուտ ունի Յանձնախումբն, քանի որ անոր հրահանգները չեն գործադրուիր։ Երբ ատենագրութիւնը պէտք է համիլ, կըսենք, մեղի պատասխան տուող տնօրէն չ'կայ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ելեւմտից Յանձնախումբն արդէն մեծ գեր ունի այդ տնօրէնութեանց գործադրութեան մէջ, զորս Դիւանը սահմանած է, եւ ընապէս Յանձնախումբն գործակցութեանը պիտի դիմէ այս մասին՝ արդ եթէ ժողովը գոհ կըլլայ այս յայտարարութեամբ կը գոցենք խնդիրն։

ԶԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛։

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Ազգային ժողովոյ նիստերը 70 թուականէն ի վեր սկսած են շարունակուիլ, եւ եթէ Ատենագրութիւնները թղթատենք, յայտարարեալ ապահովիլ խոստմանց ստեղծ պիտի հանդիպինք, որ սակայն անգործադրելի մնացած են։ Ահաւասիկ օրակարգին մէջ ունինք այսօր Տիգրանակերտի խնդիրն, որ անցեալ նստին մէջ յուղուեցաւ եւ այսօր պիտի շարունակուի, որքան ուրեմն կարեւոր էր որ նոյն նիստի ատենագրութիւնն այսօր առձեռն ունենայինք։ Այս ժողովն մեծ հեղինակութիւն ունի, սակայն ցաւալի է որ ուղղակի իրեն վերաբերեալ գործոց կարգադրութեան համար այնչափ կարեւորութիւն ու հոգածութիւն չընծայուիր, որչափ կը պահանջէ իւր դիրքը։ Ինչ որ է, այժմ քանի որ Դիւանը կրկին եւ կրկին կը յայտարարէ թէ այս տեսակ յայտարարմանց առաջին առնելու համար պէտք եղած միջոցները տնօրինած է, կառավարեմ գոհանալ այդ խոստմամբ եւ գոցել խնդիրը։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես ելեւմտից Յանձնախումբին Ատենապետն եմ, եւ յայտարարեցի թէ մեր հրահանգները լսելի չեն լինիր։

բայց Դիւանը ապահովութիւն կուտայ որ պէտք եղած կարգադրութիւնը պիտի ընէ, կուտանք ուրեմն այս խոստման գործադրութեան, եւ եթէ նորէն ի դերեւելնէ, այն ատեն ժողովին կը մնայ տնօրինել ինչ որ հարկ է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչո՞րն ատենադրութեանց կանոնաւոր հրատարակութեանց վրայ է, այն յապաղումները որ կը պատահին զանազան պատճառներու ներքեւ եւ, որոց բարձման համար, կը կրկնեմ, «Դիւանը խորհած է ինչ որ արժան է եւ պիտի ի գործ դնէ Եւրոպայի Յանձնախմբին հետ բանակցութեամբ» եթէ ժողովը կուզէ տեղեկանալ այդ պատճառներուն, Դիւանը զանոնք որոշելու պէտք չունի, եւ պատրաստ է Ատենադպիր Էֆէնտին խօսք առնուլ եւ պատասխանել, բայց միթէ հարկ կա՞յ այսպիսի խնդիր մը յարուցանելու, երբ Դիւանն այսքան ապահովիչ խոստումներ կընէ:

ԶԱՅՆԵՐ. — Ոչ, ոչ:

ՈՒՐԻՇ ԶԱՅՆԵՐ. — Կընդունինք Դիւանի խոստումը:

Հետեւապէս ժողովը ԿԸ ՀԱՒԱՆԻ Ատենադպիր Էֆէնտիի յայտարարութեան, եւ կը վերջանայ խնդիրը:

3.

Բացակայութիւն Երեսփոխանաց

Երեսփոխաններէն՝

1. Տ. Յարութիւն քահանայ Սերովբեան
2. Գրիգոր Էֆէնտի Օտեան
3. Մկրտիչ Էֆէնտի Գողանձեան

Գրով, իսկ՝

4. Նորատուհնեան Յակոբ Էֆէնտի

Ատենադպիր Էֆէնտիի միջոցաւ ծանուցած լինելով թէ անձնական տկարութեան պատճառաւ ստիպուած են այսօրեայ նիստէն բացակայ մնալ, Ատենադպիր Էֆէնտին անոնց անունը կը յիշատակէ, եւ բացակայութիւնն իբր օրինաւոր՝ արձանագրել կուտայ ներկայութեան տուժարին մէջ:

Տ. ՅԱԿՈԲ Վ. ԱՇՈՏ. — Եկեղեցական Երեսփոխաններէն Տ. Սահակ քահանայ Փախաղեան անձնական տկարութեան պատճառաւ բացակայ գտնուելու հարկադրեալ է այսօր, եւ անկարող լինելով նամակ գրելու եւ իւր բացակայութեան պատճառը ծանուցանելու, յանձնարարած է ինձ զայն ժողովը ղեկուցանել:

Ես հետեւապէս Տ. Սահակ քահանայի բացակայութիւնն իբր օրինաւոր կարձանագրուի:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Առթիւն եկաւ յիշելու որ շատ մ'Երեսփոխաններ քանի մը ամէն ի վեր բացակայ կը գտնուին ժողովոյ նիստերէն, եւ որպէս զի հրաժարումէ զերծ մնան, անձնական հիւանդութեան պատճառաւ կը մէջ կը բերեն: Մինչեւ ե՞րբ պիտի չարունակուի այս վիճակը. Դիւանին ուշադրութիւնը կը հրաւիրեմ բացակայ Երեսփոխանաց այս ընթացքին վրայ:

Տ. ՅԱԿՈԲ Վ. ԱՇՈՏ. — Կան Երեսփոխաններ ալ որ թէեւ բացակայ կը գտնուին ստէպ նիստերէն, սակայն կանոնական ազդարարութենէն զերծ մնալու համար կուգան ներկայութեան տուժարը կատարողներն եւ կը մեկնին, առանց ժողովին աշխատութեանց մասնակցելու: Այս ալ բացակայութեան մէկ ուրիշ տեսակն է, զոր պէտք է ժողովը ուշադրութեան առնու, եւ դարմանը տնօրինէ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կառավարեմ որ Դիւանը յառաջիկայ նստին ժողովին ներկայացնէ բացակայ Երեսփոխանաց ցանկը:

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այն Երեսփոխաններն որ ներկայութեան տուժարը ստորագրելով կը մէկնին, ըսել է իրենց կամքը ժողովին կաւանդեն, իսկ անոնք որ բնաւ ժողովին չ'են ներկայանար առանց բացակայութեան բանաւոր պատճառի, ի հարկէ պարտադանց են: Եթէ ժողովը բացակայութեան խնդիրն ներկատողութեան առնուլ եւ պէտք եղած տրնօրինութիւնն ընել կուզէ, Դիւանը կը խոստանայ բացակայ Երեսփոխանաց ցանկը պատրաստել, եւ յառաջիկայ նիստին հաղորդել ժողովը ի տնօրինութիւն:

ԶԱՅՆԵՐ. — Շատ աղէկ:

Ժողովը ԿԸ ՀԱՒԱՆԻ Ատենադպիր Էֆէնտիի յայտարարութեան եւ կը փակուի միջադէպը:

4.

Երկրորդ ատենադպիր Գ. Զերազ Էֆէնտիի հրաժարականը

Ժողովոյ երկրորդ Ատենադպիր Գ. Զերազ Էֆէնտիի կողմէ մատուցեալ յետագայ հրաժարագիրը կարգացուցաւ:

Վսեմափայլ Ատենադպիր Էֆէնտի,

5.

Երեսփոխան Մ. Քափամաճեան Էֆէնտիի հրաժարման խնդիրը

Տեսնելով որ անձնական զրադումներ չ'են ներեր եւ գուցէ բաւական ժամանակ չի պիտի ներեն ինձ կատարել դերատենադպրի պաշտօնս, այնչափ ճշտութեամբ որչափ կը պահանջէ մեր ներքին կանոնադիրը, կը պարտաւորեմ հրաժեշտ տալ Ազգային ժողովոյ Դիւանէն:

Հաճեցէք ընդունիլ այս առթիւ, Ատենադպիր Էֆէնտի, խորին յարգանացս հաւաստին:

Գ. Զերազ

Բերա, 30 Նոյեմբեր 1879

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովին վերջին նիստէն ետեւ՝ մեր ընկերակիցներէն, Քափամաճեան Էֆէնտին հրաժարական մատուցած էր իւր Երեսփոխանական պաշտօնէն: Իւր հրաժարականը պատճառաբանեալ չէր, եւ Դիւանը Քափամաճեան Էֆէնտիի հետ բանակցելով յաջողեցաւ զայն ետ առնուլ տալ:

Դիւանը պարտ կը համարի այս եղելութիւնն ի զ/տութիւն հաղորդել ժողովիդ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Այսպիսի խնդիր մ'եկած չէ ժողովին, ուստի՝ կարծեմ աւելորդ է եղած մասնաւոր դործողութեանց վրայ տեղեկութիւն հաղորդել: Մենք արդէն Քափամաճեան էֆէնտին հրաժարեալ չենք նկատեր որ անոր հրաժարականը խնդրոյ նիւթ ընենք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ Քափամաճեան էֆէնտին հրաժարականը պատճառաբանեալ լինէր, Դիւանը վայրկեան մ'անգամ չի պիտի մտաբերէր զայն սքօզել ժողովէդ եւ պիտի փութար խնդիրը հոս բերելու, բայց ըստ որում պարզ հրաժարական մ'էր, համարձակեցաւ Քափամաճեան էֆէնտին յորդորել որ եւ առնու իւր հրաժարականն եւ յաջողեցաւ եւ որովհետեւ ազգային լրագիրք հրատարակած էին զայն, Դիւանն հարկ դատեց այս մասին ժողովիդ ծանօթութիւն տալ եւ սոյն խնդրոյն վերջացած ըլլալը հռչակել, որով վրայ ասկէ աւելի խօսիլ աւելորդ է:

6.

Համարակալութեան ղեկավար տեղեկագիրը

Քաղ. ժողովոյ կողմէ ներկայացեալ նոր վարկի առաջարկութեան վրայ Համարակալութեան ղեկավարին կողմէ ուղղեալ յետագայ տեղեկագիրը կարգացուեցաւ:

Վսեմափայլ Ատենապետ էֆէնտի Ազգային ժողովոյ:

Քաղաքական ժողովոյ 2 նշեմբեր 79 թուական գրութեամբ առաջարկութիւնն ի մասին 3000 ղշ ամսական յաւելումի՝ Դիւանն նկատողութեան առ-

նելով, հարկ դատեց Քաղ. ժողովոյ հետ բանակցութեամբ իմանալ թէ ի՞նչ են այն պատճառները, որոնց համար Քաղ. ժողովն ամսականաց մասին նոր վարկ կը խնդրէ, յանդի Քաղ. ժողովն ինքն ի սկզբն 15000 ղշ ամսական գումար յատկացուցած էր ելմտացոյցին մէջ, զոր Դիւանըս ընդունելով մատուցած էր Ազգ. ժողովոյ. և ժողովն ալ նոյնութեամբ ընդունած և քուէարկած էր: Այս պատճառաւ Դիւանն հարկադրեալ էր հասկընալ նաեւ թէ արդեօք այդ յաւելումածին դէմ նոր եկամտի աղբիւր մը գտած էր Քաղ. ժողովը:

Անգամ մը բերանացի բանակցութենէ յետոյ, Դիւանն գրով դիմեց Քաղ. ժողովոյ, և Յունի. 17 թուականաւ Քաղ. ժողովէն պատասխան ստացաւ թէ «Այս խնդրոյն վրայ աւելի մանրամասնութեան պէտք չտեսներ, ինք արդէն իւր կարծիքը տուած է Ազգ. ժողովոյ դիմելով «և վարկ խնդրելովը, քանզի համոզուած «է որ Պատրիարքարանի արդի հանդաճմանց մէջ պաշտօնէութիւնը 15000 ղշ «ամսականով չկրնար բաւականանալ, և «Պատրիարքարանի գործոց ներդաշնակութիւնը պահպանելու համար վարկ «չութիւնը մեծապէս կը կարօտի իւր առաջարկած վարկին ընդունելութեան»:

Դիւանն այս պատասխանը հաղորդելով Ազգ. ժողովոյ, կը գիտէ թէ այս բացատրութիւնը գոհացուցիչ ըլլալէ հետէ, և միւս կողմէն ստուգած ըլլալով թէ կեդր. անտուկն այժմեան վիճակին մէջ պարտական ըլլալու երես բռնած է, և ելմտացոյցին մէջ արդէն որոշեալ կենսական ծախքերն ընելու տնրաւական, նաեւ նկատելով թէ սահմանադրական տարեգումին մերձ է:

կեդրականէ:

Քաղ. ժողովոյ 3000 ղշ ամսական յաւելումի առաջարկն օրաձգել մինչեւ ի 1 Մայիս, սահմանադրական տարեգումիսըն:

Տեղեկաբեր

Ատենապետ

Ս. Պ. Պ. փախագեանց

Ք. Ղազարոսեան

25 յունի. 1880

Ժողովը կՈՐՈՇԷ սոյն տեղեկագիրը յառաջիկայ նիստի օրակարգն անցնել:

17.

Իրաւասութեան ղեկավար տեղեկագիրը Տիգրանակէլտի խնդրոյն վրայ

Իրաւասութեան ղեկավարին կողմէ մատուցեալ յետագայ տեղեկագիրը կարգացուեցաւ:

Առ վսեմափայլ Ատենապետ Ազգային ժողովոյ:

Դիւանն Տիգրանակէլտի դադարեալ առաջնորդ Գեր. ֆիլիպպոս եպիսկոպոսի կրկին բողոքադրոց նախաքննութիւնն ըստ յանձնարարութեան Պատկառելի ժողովոյդ կատարելով կը փութայ անոր Երդիւնքը ներկայել:

Գեր. ֆիլիպպոս եպիսկոպոս խստիւ կը բողոքէ ընդդէմ կեդր. վարչութեան իւր պաշտօնանկութիւնը հակառակ օրինաց կատարուած անիրաւութիւն մը համարելով և ծանրապէս կ'ամբաստանէ զայն իբր թէ իւր անխորհուրդ և անհեռապէս ընթացող պաշտօն եղած է Տիգրանակէլտի վիճակին ներկայ ոգորմէի կացութեան հետեւա-

բար իւր անձին դէմ եղած անարդանաց և զրկանաց հատուցում կը պահանջէ:

Դիւանն հարկ համարեց նախ և յառաջ Ազգ. վարչութենէն տեղեկութիւն խնդրել այդ պաշտօնանկութեան պատճառներուն և սղարագանքներուն վրայօք և Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր յանձնարարութեան համեմատ դիմեց առ Գեր. Տ. Մատթէոս եպիսկոպոս, իբրեւ Ազգային վարչութեան նոյն ժամանակի նախագահ: Գեր. Մատթէոս սրբազան ի պատասխանի իրեն եղած հրաւերին, մէկ կողմէն կեդր. վարչութեան և միւս կողմէն ֆիլիպպոս եպիսկոպոսի, ինչպէս նաեւ Տիգրանակէլտի Գաւառական և Քաղաքական ժողովոյ միջեւ փոխանակեալ քառասունէն աւելի թղթակցութիւններ Դիւանին ներկայելէ վերջը՝ Գեկտեմբեր 20 թուականաւ ներկայեալ տեղեկագիրը յղեց:

Այդ գրութեանց մէջ ի զուր որոշեցինք ո՛ր և է կէտ մ'որ Ազգ. վարչութեան կողմանէ գործուած զեղծման կամ դէթ գահալէժ տնօրէնութեան մը երեւոյթն ունենար, ընդհակառակն՝ Տեա'րք ատոնց մէջ վարչութեան կարի երկայնմտութեամբ և մեծ խոհականութեամբ վարուած ըլլալուն փորձերը տեսանք. մանաւանդ այն յորդորանաց և հրահանգաց մէջ՝ զորս չէ դադարած նա ուղղել առ ֆիլիպպոս եպիսկոպոս միշտ յուղղութիւն և յօրինաւորութիւն հրաւիրելով զինքն և խորհուրդ տալով նմա տեղւոյս ազգային մարմնոց հետ համաձայնութեամբ գործելու:

Գեր. ֆիլիպպոս եպիսկոպոս Ազգ. վարչութեան կողմէ քանիցս կրկնուած սոյն ազգարարութեանց կարեւորութիւնը դժբաղդաբար կամ ըմբռնած չերեւիր և

կամ անոր պէտք եղած ուշագրութիւնը չէ ընծայած և զարմանալի է որ Նորին Սրբազնութիւնն այդ մասին իւր գրութեանց մէջ և ոչ իսկ բացատրութիւն մը տալու հարկն զգացած կերբէի, սակայն անկարելի է ժխտել, Տեաւրբ, թէ իւր և տեղական ժողովոց միջեւ ծագում առնելով մշտնջենաւորել սպառնացող անհամաձայնութիւնը զԳեր. Փիլիպպոս եպիսկոպոս ոչ միայն սխալ գիրքի մը մէջ կը գնէր, այլ և զինք ծանր պատասխանատուութեան կ'ենթարկէր. արդարեւ իրաց այդ վիճակը հարկ էր որ կամ 'ի քննադատային շահուց և հանրական գործոց մատակարարութեան՝ զինք անգործութեան դատապարտէր և կամ սահմանադրական տրամադրութեանց հակառակ՝ առանց ժողովոյ գործելու ապօրինի ճամբուն մէջ գնէր:

Միւս կողմէն Դիւանս ցաւօք կը դիտէ թէ կուսակցութեանց ոգին օտար չէ գտնուած այդ անհամաձայնութեան հետեւեալ ծանրանալուն և ցաւալի է որ Նորին սրբազնութիւնն իւր խնամոց յանձնուած վիճակին մէջ տիրող կուսակցութեանց միջեւ՝ իրրեւ սիրտ և խաղաղութեան պաշտօնեայ, իբրեւ հայր հասարակաց և իմաստուն հովիւ՝ չէ կարողացած չէզոք և անաչառ գիրք մը բռնել և ոչ ալ իւր հեղահամբոյր օրինակովը զանոնք 'ի ծոց եղբայրական միութեան առաջնորդեր ընդ հակառակն, Տեաւրբ, կերբէի թէ ինքն իսկ անոնց բուռն հասանքէն մըղուած՝ թերեւս առանց գիտակցութեան կրից առաւել յուզման և գրգռութեան ասպարէզ բացած է: Աւելորդ է ըսել թէ սոյն գայթակղական օրինակին բընական և ազեատալի հետեւանքն եղած են ամբողջին կողմանէ վերջէն տեղի ու-

նեցած անիշխանական ծայրայեղութիւնք:

Գեր. Փիլիպպոս եպիսկոպոս այդ անհամաձայնութեան ոգւով այնքան նախապաշարեալ կերբէի, Տեաւրբ, որ մինչեւ իսկ խուլ և անուշադիր կը մնայ Ազգ. Վարչութեան վերջին և թախանձադին յորդորանաց, որով հրաւեր կը կարգացուէր իրեն որ գէթ ներկայ ծանրակշիռ պարագայից մէջ 'ի սէր ազգին, 'ի սէր հանրութեան նուիրական շահուց առ ժամս տեղի տայ և ներքին խռովութիւնները մէկդի թողլով՝ ոգւով չափ աշխատի տեղական Ազգ. ժողովոց հետ միաբանութեամբ՝ գործակցել Ազգ. պատուիրակաց, որք բարենորոգմանց կենսական խնդրոյն համար յատկապէս խրկուած էին 'ի Տիգրանակերտ:

Այս ամենուն առջեւ, Տեաւրբ, Փիլիպպոս Սրբազան անողորմելի կը մնայ, Ազգ. Պատուիրակք տեսնելով որ նորայս ընթացքն արգելք կը լլայ իրենց ստացած հրահանգները գործադրելու, որով և ազգին էական շահերը վտանդի կ'ենթարկին, կը հարկադրին հեռագրիւ պաշտօնանկութիւնն ու հեռացումը խնդրելու:

Ազգ. Վարչութիւնը չէր կրնար վարանիլ, մանաւանդ որ Փիլիպպոս եպիսկոպոսի նախընթաց արարքը ակնհերեւ կեցած էին իւր առջեւ, ուստի 'իսպառ ժողովով կորոշէ նորա պաշտօնանկութիւնն և անմիջապէս կը գործադրէ:

Ի վերջոյ, Տեաւրբ, Դիւանս Գեր. Փիլիպպոս եպիսկոպոսի պաշտօնավարութեան մասին իւր անաչառ քննադատութիւնքն յատենի ժողովոյդ ներկայած ատեն թէ՛ արդարութեան պարտք մը հատուցանելու և թէ՛ ո՛ր և է թիւրիմացութեան տեղի չտալու համար՝ հարկ կը համարի նա-

եւ յայտարարել թէ Նորին սրբազնութեան անձին նկատմամբ հաւատարմաբար իւր ստացած վկայութիւնք աւոր ազգասիրական ոգւոյն և բարեմիտ զգացմանց վրայօք գովեստիւ կը խօսին. ուստի Դիւանս նկատելով որ Փիլիպպոս սրբազանի պաշտօնավարութեան մէջ նըշմարուած յոռութիւնքն այդ բարեմասնութեանց ճիշդ հակապատկերը կը ներկայացնեն, իրաւամբ կը կասկածի թէ մի գուցէ Նորին Սրբազնութիւնը իւր բարեմասնութեամբը կուսակցութեանց միոյն ճարտար մեքենայութեանց կամ միւսին չափազանց եռանդին և կամ երկուքին ալ մէկանց զոհ գացած ըլլայ:

Ահա ասոնք են այժմ իրողութիւնք, որ առարկայ եղած են Դիւանսի ձեռնարկած նախաքննութեան:

Եւ սակայն, Տեաւրբ, հարկ է խոստովանիլ թէ խնդրոյն բուն հոգին տալուն մասը կը մնայ: Տիգրանակերտի ցաւալի անցից վրայ ընդհանուր և մանրակրկիտ քննութիւն մը միայն կրնայ այդ մասին պէտք եղած լոյսը տալ և այդ խնդրոյն բուն շարժառիթներն երեւան հանել: Այդ քննութիւնը, Տեաւրբ, անհրաժեշտ է ոչ միայն Փիլիպպոս եպիսկոպոսի անձնական խնդրոյն համար այլ և Տիգրանակերտի Ազգ. շահուց համար, մանաւանդ՝ եթէ ինչպէս Գեր. Փիլիպպոս եպիսկոպոս չնշտելով կը յայտարարէ իւր վերջին բոլորազրոյց մէջ՝ իրօք ազգին վընասուց պատճառ եղող շատ մը գաղտնիք կան, որ այդ առթիւ 'ի յայտ արտի գան:

Բայց ինչ որ ալ ըլլայ այդ քննութեան ունենալիք արդիւնքը, Գեր. Փիլիպպոս եպիսկոպոսի գիրքն առաջի Ազգ. Վարչութեան չկրնար փոխուիլ, հետե-

ւապէս ընդդէմ օրինաւորութեան, ընդդէմ խոհակտնութեան իւր ունեցած յոռի և անխորհուրդ ընթացից բնական հետեւանքն եղած է իւր պաշտօնանկութիւնը, զոր Վարչութիւնն ալ թերեւս 'ի շնորհս իւր վերոյիշեալ բարեմասնութեանց շատ ուշ և միայն ստիպողական պարագայից առջեւ գործադրելու հարկադրուած է, ուստի իւր բողոքն աւոր դէմ բողոքովին անտեղի է և անիրաւ:

Հետեւաբար Դիւանս եղրակացնելով կառաջարկէ՝

Ա. Մերթել Գեր. Փիլիպպոս եպիսկոպոսի բողոքն ընդդէմ Ազգ. Վարչութեան:

Բ. Թանձնարարել Վարչութեան որ պարագայից համեմատ երբ պատշաճ դատի Տիգրանակերտի տնցից և անոնց պատճառներուն մանրամասն քննութեանը ձեռնարկէ:

'ի դիմաց իրաւասութեան

10 Յունիւ 1880 Դիւանի

Կ. Պօլիս Ատենապետ

Ա. Ալքուն Տիւրքի

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ահաւասիկ կը ներկայացնեմ ձեզ սոյն խնդրոյն վրայ Տ. Մատթէոս Սրբազանի մատուցած բացատրութեանց տեղեկագիրը, զոր իրաւասութեան դիւանը կը ցորդած է իւր տեղեկագրին:

Մեծ. Ատենապետ Էֆէնտի իրաւասութեան դիւանի Ազգային ժողովոյ:

Պատիւ ունեցայ պատուարժան դիւանիդ 1879 Նոյեմբեր 28 թուական պաշտօնագիրն ստանալու ի 1 ամսոյս,

որ Տիգրանակերտի դադարեալ առաջնորդ Գերապատիւ Փիլիպպոս եպիսկոպոսի պաշտօնանկութեան պատճառներուն և պարագայներուն վրայ տեղեկութիւն կուզէր ինձմէ՝ իբրեւ ազգային վարչութեան նոյն ժամանակի նախագահէ :

Կը փութամ ինձմէ ուղուած տեղեկութիւններն ազգային վարչութեան և Գերապատիւ Փիլիպպոս եպիսկոպոսի միջև փոխանակուած պաշտօնական թղթերէն (զորս մինչ ց' 14-ն ամսոյս հաղիւ ուրեմն կրցի հաւաքել) քաղելով ներկայիս պատուարժան Դիւանիդ :

Պատուարժան Տեառք, որպէս զի Գերապատիւ Փիլիպպոս եպիսկոպոսի պաշտօնանկութեան պատճառներն և պարագայներն ինքնին յերեւան գան. հարկ անհրաժեշտ է Տիգրանակերտի խնդրոյն ծագումէն սկիզբն առնել, որ անցեալ 1878 Գեղտեմբեր 20 էն կսկսի, որ թուականին ի Պատրիարքարան հասած է Գերապատիւ Փիլիպպոս եպիսկոպոսի 1878 Նոյեմբեր 24 ամսաթիւ առաջին նամակը :

Տիգրանակերտի դադարեալ առաջնորդ Գերապատիւ Փիլիպպոս եպիսկոպոսի և տեղական ազգային ժողովոյ մէջ տեղի դառած անհամաձայնութեան առիթ տուող խնդիրներն են՝

Ա. — Տիգրանակերտի Տեղական ազգային ժողովոյ, մասնաւորապէս Գաղաքական ժողովոյ վերակազմութեան խընդիրը :

Բ. — Զարբհեան Գէորգի քահանայ ըլլալու, և Զավղաթաթեան Թովմասի՝ ազգային վարժարանաց մէջ դաստիարակութեան պաշտօն վարելու, և այս երկու ազգայնոց հետ Պետրոս ձերհանի ազգային պաշտօնի կոչուելու խընդիրը, և

Գ. — Շահինեան Հաղբոցի Տէր Յովհաննէս քահանայի փիլոնագրիութեան, և ի Հաղբո վերագաւառելու խնդիրը :

Այս երեք խնդրոց թէ՛ ինպատու և թէ՛ յաննպատու անցեալ 1878 Գեղտեմբեր 20 էն սկսեալ Գերապատիւ Փիլիպպոս եպիսկոպոսի տեղական ազգային ժողովոյ, Հաղբոցի Տէր Յովհաննէս քահանայի և այլ մասնաւոր անձանց գրութիւնքն և հեռագրերը, և Տիգրանակերտի վիճակին քաղաքական դիրքն ու ժամանակին փափկութիւնը նկատողութեան առնուելով՝ նոյն թուականէն մինչ ց' 1879 Մայիսի 17, թէ՛ Սրբազան Պատրիարք Հօր տնօրէնութեամբ, թէ՛ վարչական և թէ՛ բարենորոգմանց Յանձնախմբի որոշմամբ հետզհետէ առ Գերապատիւ Փիլիպպոս եպիսկոպոս ուղղեալ պաշտօնագրերն և հեռագրերը Գերապատիւ Փիլիպպոս Սրբազան անդործադրելի թողելէ զատ՝ ժողովրդեան ձեռօք տեղական ազգային ժողովները կը լուծէ, ինչպէս իւր 1879 Յունվար 19 թուական գրութեան մէջ ներփակեալ Յունվար 17 ամսաթիւ իւր և ժողովրդեան պատգամաւորաց միջև եղած հարց—պատասխանոյ ձեւով գրութենէն բացայայտ կերելի, զոր և ինքն իսկ ստորագրած է. և ինչպէս կերելի իւր առ տեղոյն Գաւառական ժողովն յղած Յունվար 20 թուական գրէն, որոյ պատճէնը Գաւառական ժողովը Յունվար 21 ամսաթիւ գրութեամբ ընդկած է ի Պատրիարքարան, և Սրբազան Պատրիարք Հօր հաճութեամբ և բարենորոգմանց Յանձնախմբի որոշմամբ Տիգրանակերտի ազգային լիազօր պատուիրակ՝ Ակնայ առաջնորդ Արժանապատիւ Գարեգին վարդապետ Սրբանձտեանց և ազգային երեսփոխան

Մեծապատիւ Յովհաննէս Էփէնտի Պոյահեան անդործութեան կը դատապարտէ, ինչպէս կը յայտնէ նոցա Յունիս 20 ամսաթիւ նամակը :

Ազգային պատուիրակը տեսնելով որ հակառակ իրենց այնքան ջանից և համոզմանց՝ Գերապատիւ Փիլիպպոս եպիսկոպոս բարենորոգման խնդրոյն նկատմամբ գոնէ Տեղական ազգային ժողովոյ հետ գործելու մասին անհամոզելի կը մնայ, ճարահատեալ ինչպէս կըսեն իրենց Յունիս 6 ամսաթիւ (գրութեամբն, Յունիս 3 ամսաթիւ հեռագրով նորա պաշտօնանկութիւնը փութացնել կը խնդրեն, որպէս զի կարելի ըլլայ բարենորոգմանց մասին իրենց տրուած հրահանգին համաձայն գործել :

Ազգային վարչութեան Խառն ժողովըն իւր Յունիս 4 ի նիստին մէջ ազգային պատուիրակաց սոյն Յունիս 3 ամսաթիւ հեռագրոյն հետ ուշադրութեան առնելով նաև Տիգրանակերտի խնդրոյն սկիզբէն Գերապատիւ Փիլիպպոս եպիսկոպոսի բռնած ընթացքն, և

Նկատելով որ՝ Գերապատիւ Փիլիպպոս եպիսկոպոս իւր և տեղական ազգային ժողովոյ միջև տեղի դառած անհամաձայնութիւնը բառնալու համար վարչական և ոչ մէկ որոշումն ու տնօրէնութիւն մինչև այն ատեն չէ գործադրած, որով անհամաձայնութիւնն արմատացած է.

Նկատելով որ՝ հակառակ ազգային Սահմանադրութեան և Գաւառական հրահանգին՝ Տեղական ազգային ժողովները լուծած է ժողովրդեան ձեռօք, և Նկատելով մանաւանդ որ՝ ազգային պատուիրակներն անդործութեան դա-

տապարտելով ազգին հանրութեան վերաբերեալ բարձրագոյն շահն, այն է բարենորոգմանց խնդիրն ևս զոհ կերթայ :

Հետևապէս Գերապատիւ Փիլիպպոս եպիսկոպոսի այլ ևս ի Տիգրանակերտ մընալուն անկարելիութեանը համոզուելով՝ նորա պաշտօնանկութիւնն որոշեց, որ հեռաւորաւ ծանուցուեցաւ իրեն՝ ի Յունիսի :

Այս հեռագիրն Յունիս 6 ին կը հասնի ի Տիգրանակերտ, և յունիս 7 ին Ազգային պատուիրակաց չարաչար դանկոծուիլը տեղի կունենայ նոյն իսկ Գեր. Փիլիպպոս եպիսկոպոսի այն տեղ գտնուած ատեն : Ասոր վրայ կառավարութիւնը կը պարտաւորէ զԳեր. Փիլիպպոս եպիսկոպոս որ գիշերայն մեկնի՝ Տիգրանակերտէն, ինչպէս կըսէ Ազգային Պատուիրակաց Յունիս 20 թուական տեղեկագիրը, և կը մեկնի :

Ասոնք են ահա, պատուարժան Տեառք, այն պատճառներն ու պարագաները, զորս ուշադրութեան առնելով Ազգային վարչութեան Խառն ժողովը հարկ դատած է պաշտօնանկ ընել զԳեր. Փիլիպպոս եպիսկոպոս յառաջնորդական պաշտամանէ Տիգրանակերտի, որոց նըկատմամբ պաշտօնական գրութիւնք ձեւին, պատրաստ եմ մանրամասն բացատրութիւն տալ յատենի անդ. Ազգային ժողովոյ : Մնամ աղօթարար Յունիս 1879 ՄԱՏԹԵՆՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԵԱՆ Ի Նոր թաղ յիւսկիւտար

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ահաւասիկ երկու տե-

դեկադր մեր առջեւ : մին իրաւասութեան դիւանին , եւ միւսը Վարչութեան կողմէ , որոց կապաւոր ժողովը խնդիրը նկատողութեան առնելու համար : Սակայն վիճարանութիւնը բանալէ առաջ՝ հարկ կը համարիմ սա կէտին վրայ ժողովիդ կարծիքը հասկնալ թէ բաւ կը համարի՞ արդեօք տեղեկագրերուն ընթերցումն եւ կո՞ւզէ այսօր անմիջապէս ձեռք առնուլ խնդիրը , թէ ոչ՝ պէտք կըզայ անոնց տպագրութեան սպասելու եւ յառաջիկայ նիստին վերապահելու խնդրոյն վիճարանութիւնը :

ՊԱՌՆԱՅԵԱՆ Պ. ԷՖ. — Ինչպէս կը տեսնուի Իրաւասութեան դիւանի տեղեկագրէն փոխադրուող անձնական պաշտօնականութիւնն ապօրինի դործ մ'եղած չէ եւ կարծեմ անոր Տիգրանակերտ վերադարձն այս միջոցիս յարմար չէ , բայց ի՞նչ պիտի լինի դաւառին վիճակն այսպէս անխնամ եւ լքեալ մնալով : Ազգային մեծ շահեր կան հոն , որ նկատողութեան արժանի են եւ պաշտպանութեան կարօտ : Ուստի եթէ փոխադրուող անձնական պաշտօնականութիւնն , չէ կարելի դաւառի վիճակին բարւոյն խնդիրն երկարաձգել : Լսեցինք որ Վարչութեան կողմէ Խորէն եպիսկոպոս Մխիթարեան առաջնորդական տեղապահ նշանակուել է դաւառին , բայց՝ չը գիտեմ , ինչ պատճառաւ չէ գացեր հոն , ուստի ես կառաջարկեմ որ ամենէն առաջ դաւառին խնդիրը նկատողութեան նիւթ ըլլայ , եւ ձեռնհաս եկեղեցական մը յուղարկուի Տիգրանակերտ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնեմ որ ատենադան էֆէնտին անտեղեկ է այս խնդրոյն նկատմամբ եղած վերջին որոշման : Ազգային ժողովն իւր նախորդ նիստին մէջ՝ խնդիրն մի եւ նոյն տեսակէտէն գիտելով երկուքի բաժնեց դայն , փոխադրուող եպիսկոպոսի յարուցած դատն իրր ուրոյն խնդրի՝ իւր տնօրինութեան վերապահեց , իսկ դաւառին դործոց կարգադրութեան խնդիրը Վարչութեան յանձնեց , որպէս զի տեղական ազգային շահուց համաձայն պարտաւարաւոր տնօրինէ : Հետեւաբար Ազգա-

յին ժողովն այլ եւս այս վերջին խնդրոյն հետ դործ չունի , եւ անտարակոյս վարչութիւնը կը տնօրինէ ինչ որ հարկ է : Այս մասին ձեռնադրեցութիւնը զոհանջելու համար՝ կը փութամ յայտնել որ Եղեմիոյ առաջնորդ Խորէն եպիսկոպոս Մխիթարեան Տիգրանակերտի առաջնորդական տեղապահ կարգուելով թէ եւ ի սկզբան չէր ուղած երթալ , բայց հետագրական երկրորդ հրամանի մը վրայ՝ իւր վիճակէն մեկնել է Տիգրանակերտ երթալու համար : Իսկ այժմ Իրաւասութեան դիւանի տեղեկագրով ժողովին նկատառման ներկայացեալ խնդիրն մի միայն փոխադրուող անձնական պաշտօնականութիւնն է , սակայն ինչպէս յիշեցի արդէն , նախ պէտք է ժողովը սա կէտին վրայ իւր կամքը յայտնէ թէ տեղեկագրին ընթերցումը բաւական համարելով կուզէ՞ այսօր անմիջապէս վիճարանութիւնը սկսիլ , թէ ոչ անոնց տպագրութեանն սպասել հարկ կը դատուի :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. Կը յիշէք որ այս խնդիրն արդէն վիճարանութեան դրուած , եւ իւր լուծման մերձակէտը հասած է , երբ Ատենապետ էֆէնտի առաջարկին վրայ ժողովն իւր հնգետասաներորդ նիստին մէջ՝ որոշեց Իրաւասութեան դիւանի տեղեկագրին սպասել , հակառակ իւր նախորդ որոշման : Ինչպէս ցոյց կուտայ ժողովիս չորեքտասաններորդ նիստի ատենագրութիւնն , որ պահ մը առաջ վաւերացաւ : Գոհ ենք որ Իրաւասութեան դիւանն ուր ուրեմն հաճեցաւ բերել իւր տեղեկագիրն , որ այս խնդրոյն նկատմամբ նոր բան մը չ'յայտնելու մեղ , այլ՝ ճիշդ մեր ըսածին նման՝ կառաջարկէ քննութիւն եւ դատաստան բանալ բողոքարկուող եպիսկոպոսին եւ պատուիրակաց միջեւ : Ուստի չեմ կարծեր որ խնդիրն ուրիշ նիստի յետաձգել հարկ լինի , տեղեկագրին տպագրեալ ի ձեռին ունենալու համար : Իրաւասութեան դիւանի առաջարկն շատ բանաւոր է , փասն զի երբ պաշտօնական առաջնորդ մ'իրաւունք եւ արդարութիւն կը խնդրէ՝ բողոք բառնալով , անկարելի է չլսել իրեն , եւ քննութիւնը ղլանալ , առանց որոյ՝ մեզմէ ոչ ոք կրնայ ձեռքն խղճին վրայ

դնելով քուէ տալ : Ի նպաստ այս կամ այն կողմին :

Իրաւասութեան դիւանը միայն Վարչութիւնը լսելով տեղեկագրի բերած է մեղ , ուստի այդ տեղեկագրին կոթնելով չենք կրնար մենք արդար վճիռ մ'արձակել , պէտք է բողոքին բացատրութիւններն լսել , որպէս զի մեր վճիռն արդար լինի : հետեւաբար որ կողմ ալ դառնանք այս կէտն էական է , եւ երբ որոշուի , այն ատեն կը խօսինք նաեւ բուն խնդրոյն վրայ , որու նկատմամբ շատ ըսելիքներ ունինք , ուրեմն որոշենք այժմ քննութեան եւ դատաստանի կէտը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Իրաւասութեան դիւանի տեղեկագիրը նոր խնդիր մը չբերեր մեղ , արդէն ունինք զայն օրակարգին մէջ , բայց չգիտեմ ինչո՞ւ յիշուին երեք անոյժ խնդրոց շարքին մէջ անցերէ յետագաս , չեմ հասկնար նաեւ թէ ինչո՞ւ այդ անոյժ խնդիրներէն ութըն յիշատակուել են յանուանէ օրակարգին մէջ , քանի որ անոնց ամենուն վրայ Մայր դիւանը տեղեկագիր մը մատուցած է որ ժողովին նկատողութեան ներկայացեալ է եւ հարկ չկայ այժմ տեղեկագրէն խնդիրներ քաղելու եւ դատ դատ օրակարգին մէջ զետեղելու : Այս դիտողութիւնը Մայր դիւանին ուշադրութեան կը յանձնեմ :

Արդ՝ մեր օրուան խնդիրը Տիգրանակերտի խնդիրն է , Իրաւասութեան դիւանը խոստացած էր իւր տեղեկագիրը բերել , այս նիստին , եւ ահա ատիկ մատուց զայն այսօր , որու վրայ պիտի հիմնէ ժողովը խնդրոյն վիճարանութիւնը : Բայց այդ տեղեկագիրը , ինչպէս կը կարծէ Քաթամաճեան էֆէնտին , մի եւ նոյն բանը չըսեր , ինչ որ ինք կըսէ՝ Իրաւասութեան դիւանը խնդիրը տարբեր տեսակէտով կը քննէ , եւ կեղքակացնէ թէ փոխադրուող եպիսկոպոս Վարչութեան դէմ բողոքելու իրաւունք չունի , եւ կառաջարկէ յանձնարարել Վարչութեան որ երբ պատշաճ դատի Տիգրանակերտի անցից եւ անոնց պատճառներուն քննութեան ձեռնարկէ քննութիւնը որով միայն պիտի կրնայ երեւան դալ թէ ի՞նչու առաջնորդն եւ ազգային պատուիրակներն

չկրցին համաձայնիլ : Այո , պէտք է ամէն մարդ ձեռքը խղճին վրայ դնելով տայ իւր քուէն , ինչպէս ըսաւ Քաթամաճեան էֆէնտին , եթէ Իրաւասութեան դիւանին եղբայրացութիւնն ընդունինք , Վարչութիւնն այս խնդրոյն մէջ անպարտ կը հռչակուի , եւ խնդրոյն քննութիւնը կը յանձնուի անոր , բայց այսպիսի քուէ մը տալու համար ինձ կը թուի թէ պէտք է որ մեր աչաց առջեւ ունենանք թէ զոյգ տեղեկագրերն , որ կարգացուեցան պահ մ'առաջ , եւ թէ այս խնդրոյն վերաբերեալ բոլոր պաշտօնական թղթերն , զորո Վարչութիւնն ունի ի ձեռին եւ մեղ ներկայել կուզէ : Այս գրութեանց ընթերցումն այնքան կարեւոր եւ անհրաժեշտ ըլլալ կսկսի , որքան ծանրակշիռ իրողութիւններ նոր խնդրոյ ի յայտ կուգան , որ անձանօթ էին մեզ ցարդ : Օրինակի համար , դեռ նոր իմացանք որ փոխադրուող եպիսկոպոս՝ Տիգրանակերտի Ազգային ժողովները ամբօրին ձեռք լուծել է , եւ այս մասին Ազգ. վարչութեան եւ անոր միջեւ բանակցութիւններ տեղի ունեցել են , ահա ատիկ ծանր խնդիր մը , որու սկզբունքն մեզնէ ոչ ոք կրնայ ընդունիլ : Այսպիսի իրողութիւններ յիշուած ատեն , անշուշտ հարկ է որ անոնց վերաբերեալ բոլոր գրութիւնները ներկայանան , կամ գէթ որոնք որ Վարչութիւնը յարմար կը դատի հրապարակութեան , յանձնէ Մայր դիւանին , որպէս զի ատենագրութեանց մէջ անցնին Իրաւասութեան դիւանի կողմէ եկած տեղեկագրերուն հետ եւ այսպէս կարենանք ուսումնասիրել ամեն ինչ որ փոխադրուող եպիսկոպոսի խնդրոյն կը վերաբերի , բայց այս առաջարկին վրայ չեմ պնդեր , եթէ ժողովը պատշաճ դատի առանց տպագրութեանն սպասելու անոնց ընթերցումը լսելով սկսիլ վիճարանութիւնն այժմէն , եւ իւր որոշումը տալ :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Փափաղեան էֆէնտին Տիգրանակերտի անցից մէջ՝ տեղական ազգային ժողովոց լուծման դէպքը յիշատակեց ի մասնաւորի , իբրեւ ծանրագոյն իրողութիւն մը , եւ անոր վերաբերեալ գրութեանց հրատարակութեան պէտքը ցոյց տուաւ : Հարկ կը համարիմ յայտարարել

որ այդ գրութեանց մէջ փխխիւստ եպիսկոպոսի ստորագրութեան ներքեւ հեռագրեր կան, որովք նոյն իսկ ինք կը խոստովանի թէ տեղական ժողովները լուծած է ժողովրդեան ձեռքը ժողովիս վերջին նիստերէն միոյն մէջ մեր ընկերակիցներէն Պէրպէրեան է ֆէնտին Տիգրանակերտի խնդրոյն վրայ խօսելով կը սեր թէ Վարչութիւնը խորհրդաւոր լուծութիւն մը կը պահէ. ահաւասիկ ժամը հնչեց որ Վարչութիւնը խզէ իւր լուծեան կայն, եւ ամեն ինչ յայտնէ ձեզ անպատրուակ, ուստի ժողովդ պէտք է որոշէ սոյն խնդրոյն վերաբերեալ բոլոր գրութեանց ընթերցումն, որպէս զի տեղեկանայ ամենայնի, եւ չկարծուի թէ Վարչութիւնն իւր տնօրէնութիւնը պաշտպանելու անկարող խորախորհուրդ լուծիւն մը պահէ, որով եւ իրեն դէմ մեղանդանքներ ըլլան ընդունայն:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես կառավարկեմ որ այդ գրութիւններն յատենի աստ կարգացուն, եւ անցնին ատենագրութեան մէջ, ինչպէս պիտի արձանագրուին Երաւասութեան զիւանի կողմէ եկած տեղեկագրերն:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ներուի ինձ դիտել տալ որ Տիգրանակերտի խնդիրն երկու շրջան ունի, առաջինն է՝ մինչեւ ազգային պատուիրակաց հոն ժամանումն. եւ երկրորդը պատուիրակաց հոն հասնելէն ետեւ մինչեւ ցարդ տեղի գտած դէպքերու միջոցը խնդրոյն առաջին շրջանին մէջ Վարչութիւնը փխխիւստ եպիսկոպոսի մասին որ եւ է տնօրէնութիւնն չէ ըրեր որ ժողովուրդը յուզելու բնութիւն ունենայ, ըսել է թէ խնդիրը խաղաղութեամբ կարգադրել ուղեր է: Ասոր իբր ասպացոյց՝ սա կէտը մէջ կը բերեմ որ երբ Սրուանձտեանց Գարեգին վարդապետ պատուիրակութեան պաշտօնով որոշուեցաւ Տիգրանակերտ յուզարկել, հեռագրեցին անտի Վարչութեան թէ զայն չեն ընդունիր, եւ Վարչութիւնը պատասխանեց հեռագրով թէ անոր պաշտօնը բաշխորդման խնդրոյն կը վերաբերի, եւ թէ տեղական ազգային գործող քննչութեան պաշտօն չունի: Պատրիարքարանի այս ասպ-

նովի խոստմանց վրայ Գարեգին վարդապետ կըցաւ երթալ հոն. ըսել է թէ Վարչութիւնն զգուշութեամբ վարուեցաւ որ ժողովրդեան մեծագոյն մասին կամաց հակառակ բան մը տեղի չունենայ, եւ գաւառը չվրդովի: Արդ՝ ինչպէս կերելի բուն խնդիրն պատուիրակաց հոն երթալու եւ ձախող ընթացք մը բռնելու թուականէն կսկսի, իսկ անկէ առջի խնդիրը Վարչութեան համարատուութեան վերաբերեալ բան մ'է, եւ պէտք չէ չփոխել այս վերջնոյն հետ: Մենք Վարչութիւնը մեղադրելու իրաւունք չունինք, եւ ոչ իսկ կամբաստանենք զայն, վասն զի նա իւր պատուիրակաց պարտաւոր էր վստահել, եւ անոնց առաջարկութիւնները գործադրել, սակայն անոնք զառաժելով այդ վստահութեամբ, իրենց պաշտօնին սահմանէն չեղեցան, եւ փխխիւստ եպիսկոպոսի անկումը պահանջեցին, իրեւ անհրաժեշտ հարկ մը, որով այնքան յուզումներ եւ անկարգութիւններ ծագեցան Տիգրանակերտի մէջ եւ մեր ազգային շահերը վրտանդեցին: Ուստի պէտք է թաղու սոյն խնդրոյն համարատուութեան վերաբերեալ մասն իւր ժամանակին, եւ միայն փխխիւստ եպիսկոպոսի եւ պատուիրակաց միջեւ ծագած խնդիրը քննել:

ԱՊՏՈՒՂԱՆ Գ. ԷՖ. — Այս խնդիրն այնքան երկարաձգեցաւ եւ այնքան հրատարակութեանց նիւթ ընծայեց, որ վերջապէս մեծ գայթակղութիւն յառաջ բերաւ թէ ազգին եւ թէ օտարաց մէջ: Փախաքելի էր որ անոր լուծումն երազելու համար գործնական եղանակ մը ի գործ դրուէր, եւ խնդիրը ջրուէր մեր օրակարգէն: Այս նպատակաւ ես կառավարեմ որ եթէ կարելի է, Ազգային ժողովը իւր կողմէ Գանձախումբ մ'անուանէ, եւ լիազօր արտօնութեամբ պաշտօն յանձնէ անոր, պէտք եղած քննութիւնն եւ դատաստանը կատարելու, վճռելու, եւ վերջացնելով խնդիրն՝ Ազգային ժողովոյ տեղեկագրելու: Այս եղանակը ձեռ ուշադրութեան կը ներկայացնեմ. իմ համոզումն այն է որ առանց այսպիսի կտրուկ միջոց մ'ընդունելու դեռ ամիսներով պիտի յետաձգի խնդիրն, եւ օր

քան զօր կնճռոտելով՝ անլուծանելի մնայ:

ՄԷԶՊՈՒՐԵԱՆ Ն. ԷՖ. — Ես կընդունիմ Ապտուլահ էֆէնտիի առաջարկն եւ միայն սա կը յարեմ թէ Ազգ. ժողովը արտօնութիւն տայ փխխիւստ եպիսկոպոսի որ իւր դատը պաշտպանելու համար՝ Գանձաժողովին ներկայանայ եւ յայտնէ ինչ փաստ որ ունի, եւ ինչ որ պիտի ըսէ: Վարչութիւնն այս խնդրոյն մէջ ամբաստանողի դեր ունի, իսկ փխխիւստ եպիսկոպոս անբաստանեալ է, թէ ասոնցմէ ո՞րն է անպարտ կամ յանցաւոր, այսպիսի դատական Գանձաժողովի մը քննութեամբը կրնայ երեւան ելնել, եթէ խնդիրը տակաւին պահենք մեր անգանին վրայ, եւ գրեթէ մի առ մի կարգալ սկսինք, դեռ չատ պիտի երկարաձգի անոր վախճանը:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Ընդմիջելով) Բայց ինչո՞ւ չէք ուղեր որ այդ գրերը կարգացուն:

ՄԷԶՊՈՒՐԵԱՆ Ն. ԷՖ. — (Շարունակելով) Երբ դատական Գանձաժողով մը դրուի այս խնդրոյն վերաբերեալ ամեն ինչ որ կայ կը յղուի անոր, որ կը կարգայ թղթերը, կը քննէ, կը գատէ եւ վերջացնելով խնդիրը կը տեղեկագրէ մեզ թէ ո՞ր կողմն է յանցաւորն, եւ ըստ այնմ կուտանք մեր քուէն: Միշտ մի եւ նոյն յայտարարութիւններն կը կրկնուին, եւ այս կերպով խնդիրը վերջ չի պիտի կրնայ գտնել: Այս առթիւ ներուի ինձ ըսել որ նախորդ նիստի ատենագրութեան վրայ, զոր այժմ պատիւ ունեցայ կարգալու, քանի մը զիտողութիւն ունէի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենագրութիւնն վաւերացած է արդէն, եւ զիտողութիւնը անժամանակ են այլ եւս:

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Տիգրանակերտի խնդրոյն համար քննիչ կամ դատական Գանձաժողով դնելէ առաջ, պէտք է լսել Վարչութեան բացատրութիւնները:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ներեցէք ինձ որ վի-

ճարանութեան նիւթ եղող կէտին վրայ քանի մը բացատրութիւն տամ ձեզ: Ժողովը Տիգրանակերտի խնդիրը նկատողութեան եւ վիճարանութեան ենթարկելու համար՝ վերջի անգամ հարկ դատած էր ի ձեռին ունենալ Երաւասութեան զիւանի տեղեկագրերն, որ այսօր ներկայանալով կարգացուեցաւ: Մայր զիւանը խնդիրը ձեռք առնելէ առաջ՝ հարկ զգացնալու պիտի լսէ ժողովիդ կարծիքը հասկնալ՝ թէ բաւ կը համարէ՞ր միայն տեղեկագրերն ընթերցումը լսել եւ խնդրոյն վրայ անմիջապէս վիճարանութիւնն սկսիլ, թէ ոչ կուղեր որ տպագրեալ ներկայանայ տեղեկագրերն, եւ յաջորդ նիստին յետաձգուի խնդրոյն նկատառումը: Դիւանին այս հարցումը տարաձայն կարծիքներ յառաջ բերաւ, կարծիք մը կայ թոր խնդիրն արդէն լուսաբանուած համարելով աւելորդ կը դատի տեղեկագրերն տպագրութեան սպասելու օրը: Կարծիք մը՝ ոչ միայն Իրաւասութեան զիւանի կողմէ եկած զոյգ տեղեկագրերուն, այլ նոյն իսկ սոյն խնդրոյն վերաբերեալ բոլոր պաշտօնական գրութեանց ատենագրութեան միջոցաւ տպագրութիւնը կը պահանջէ, որպէս զի ժողովը կարենայ խնդիրն իւր ամբողջութեամբն ուսումնասիրել, իսկ երրորդ առաջարկութիւն մը կուղէ առանց որ եւ է գործողութիւն մը կատարելու՝ խնդիրն բոլորովին Ազգ. ժողովոյ սեղանին վրայէն բաժնալ եւ դատական Գանձախումբի մը քննութեան յանձնել, սակայն՝ կը լռէ այն կէտին վրայ թէ վիճարանութիւնն այժմէն սկսիլ, թէ ոչ յառաջիկայ նիստին վերապահել պէտք է: Կը տեսնեմ որ տակաւին ժողովին մէջ համաձայնութիւն մը դոյացած չէ այս կէտերուն վրայ որ եւ է որոշում տալու համար, եւ որովհետեւ քուէ խնդրող չկայ, ուստի հարկ կըլլայ շարունակել վիճարանութիւնն, որպէս զի պարզուի խնդիրն, եւ զիւրանայ որոշումն:

ՄԷԶՊՈՒՐԵԱՆ Ն. ԷՖ. — Մեր առաջարկութեան նպատակն այդ թղթերը ժողովին ծանօթութեան ծածկել չէ, ամէնքն ալ կրնան երթալ դանձր կարգալ, եւ եթէ ժողովը

չխնայեր ծախքը կրնայ նաեւ տպագրելու որոշում տալ, մեր նպատակը շուտով վախճան մը տալ է խնդրոյն, եւ ասոր համար կառավարկենք դատական օրենսդրութիւն մը քննութեան յանձնել զայն :

Տ. ՄԱՏԹԵՆՈՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ.— Միթէ հա՞րկ է այս խնդրոյն համար Վարչութիւնը լսել, ահաւասիկ կարեւոր կէտ մը, որ պէտք է պարզուի : Փիլիսոփայոս եպիսկոպոսի կողմէ Վարչութեան դէմ արուած բողոքագրերը մինչեւ ցարդ երկու Դիւանաց նախաքննութեանն անցան, երկուքին կողմէ ալ եկած տեղեկագրերն Վարչութեան տնօրինութիւնը դատապարտելի չեն դտներ եւ միաձայն կառավարկեն առ ոչինչ գրել փիլիսոփայոս եպիսկոպոսի բողոքը : Սակայն տակաւին մեր մէջ մտածողներ կան թէ կարելի՞ է արդեօք խղճի մտօք այս խնդրոյն վրայ ջուէ տալ, ըսել է խնդիրը դեռ լուսաբանութեան կարօտ կը դառնայ, եւ բաւական պայծառ չեն տեսներ զայն, քուէ տալու համար : Ես ալ իբր Երեսփոխան նոյնպէս կրնամ մտածել, բայց այս տեղ ուրիշ պարագայ մը կը ներկայանայ : Եթէ անբաւական կը դատուի Իրաւասութեան դիւանին տեղեկագրին եղբակացութիւնն, ահաւասիկ Վարչութիւնը կը յայտարարէ թէ պաշտօնական կարեւոր գրութիւններ ունի ներկայացնելու, որ Տիգրանակերտի անցքերը կատարելապէս պիտի պարզեն եւ իւր ընթացքը արդարացնեն : ահաւասիկ փափաքուած լուսաբանութիւնը, հարկ է ուրեմն որ այդ գրերը կարգացունին, որ Իրաւասութեան դիւանին տեղեկագրին մէջ չգրուեցան, որպէս զի չբռնաւորեն զայն : Ուրիշ առաջարկութիւն մ'ալ կայ, այն է դատական Օրենսդրութեան մը կազմել եւ խնդրոյն անոր յանձնել բոլորովին, բայց այդպիսի յանձնարարութիւն մը կազմութեան պէտքը դեռ հաստատուած չէ, եւ այս մասին համոզում մը դոյաջնելու համար դարձեալ պէտք է որ Վարչութեան գրութիւնները կարգացունին, եւ խնդրոյն վիճակը կատարելապէս պարզեն, վասն զի այս լուսաբանութեանն ետեւ միայն կարելի է ըմբռնել եւ որոշել թէ դատական յանձնարարութիւն

մը կազմութեան պէտք կա՞, թէ ոչ : Եթէ այդ գրերը որ Տիգրանակերտի մէջ խմբագրուած են մեծ մասամբ, ներկայանան, ասորակոյս չկա թէ երկու Դիւանաց եղբակացութիւնները պիտի ընդունուն : Առաջարկուեցաւ ատենագրութեան մէջ անցնել զանոնք, բայց այդ ամեն գրութեանց վրայ մասնաւոր բացատրութիւններ կան տրուելիք : ուստի պէտք է որ յատենի կարգացունին, եւ ի կարգին պէտք եղած բացատրութիւնները տրուին : Արդ՝ ես կը մերժեմ դատական յանձնարարութիւն կազմութեան առաջարկն եւ Վարչութեան կողմէ կը յայտարարեմ թէ զինքը առանց կատարելապէս լսելու, անիրաւութիւն մը կը լինի դատաստանի ենթարկել :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Այն առաջարկութիւնը՝ զոր կրնէ Ապտուլահ Էֆէնտի, եւ Մէզպուրեան Էֆէնտի կը կրկնէ, մեր ներքին կանոնագրին եւ սովորութեան հակառակ է : Վարչութիւնն որոշում մ'ըրեր է, որու դէմ փիլիսոփայոս եպիսկոպոս բողոքը բառնալով՝ նախ ցարաբերութեան եւ ի վերջէ Իրաւասութեան դիւանին յանձնուեր է խնդրոյն ի նախաքննութիւն : Այս կրկին Դիւաններն խնդիրն ուսումնասիրել, պաշտօնական գրերը քննել, եւ համոզում գոյացուցել են թէ Վարչութեան տնօրէնութիւնն արդարացի է : Եթէ դիւաններուն այս եղբակացութիւնը զմեզ չը գօհացնել, եթէ անոնց քննութիւնն ըստ բաւականին խնդիրը չեն յստակել եւ պարզել, ի՞նչ կը մնայ մեզ ընել, տեղեկութեանց աղբիւրներուն դիմել, Վարչութեան համարը լսել, գրերը տեսնել, եւ այնուհետեւ տալ մեր քուէն : Սակայն առանց ասոնց եւ ոչ մին ընելու՝ ելնել դատական Օրենսդրութեան մը կարգել եւ Վարչութիւնը դատաստանի ենթարկել, անոր վրայ անվստահ աչօք նայիլ, եւ պարզապէս զայն տապալել ըսել է : Ուստի առաջարկեալ Օրենսդրութեանն կազմութիւնը, փոխանակ խնդրոյն լուծումը դիւրեւու, աւելի ծանր եւ կնճառից խնդիրներ կը յարուցանէ, եւ աւելի դառն հետեւանքներ կը ծնի : Կը տեսնեմ որ պաշտօնական գրութեանց ընթացման դէմ դիտողութիւններ կը լրան, ինչո՞ւ հա-

մար չգիտեմ : Եթէ ցուրտէն կը դոխնք, եւ երկարատեւ հոս մնալ չենք ուզեր, այդ գրերը կրնան տպուիլ ատենագրութեան մէջ : զորս կը կարգանք եւ կատարելապէս կ'մբընենք խնդիրն իւր ամէն մանրամասնութիւններով, եւ ամէն դարձուածներով : Իրաց ելքը գտնելու համար երկու ճամբայ կը պարզի մեր առջեւ, այն է կամ ընդունիլ Իրաւասութեան դիւանի տեղեկագրին եղբակացութիւնը, եւ փիլիսոփայոս եպիսկոպոսի Վարչութեան դէմ բողոքելու իրաւունք չունենալը հաստատելով յանձնել Վարչութեան որ Տիգրանակերտի անցից եւ անոր պատճառներուն քննութիւնն ընէ, եւ կամ եթէ զայն չենք ուզեր ընել, կարգալ բոլոր գրութիւնները, լսել Վարչութեան բացատրութիւնները, եւ ա՛նուհետեւ մեր որոշումը տալ :

Ըստ իս այս միջոցներուն լաւագոյն է երկրորդն, քանի որ գիտակցութեամբ եւ կատարեալ խելամոռութեամբ գործել կուզենք, քանի որ Վարչութիւնը համար տալ կուզէ, ուստի ինչ պաշտօնական գրութիւն որ Վարչութիւնն ունի ի ձեռին, եւ արժան կը դատուի հրատարակութեան, թող յանձնէ Դիւանին, որ տրուին այսօրեայ նիստի ատենագրութեան մէջ, եւ յաջորդ նիստին ժողովը նկատողութեան առնու խնդիրն, միայն թէ ատենագրութիւններն ժամանակին ցրուին, եւ նիստն ըստ որոշման՝ Պատրիարքարանի մէջ տեղի ունենայ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Կը ձայնակցիմ այս առաջարկութեան :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ.— Որովհետեւ վերջին նիստին մէջ Սրբազան Պատրիարքը դիտողութիւն ըրաւ թէ այդ գրերուն տպագրութիւնն անպատշաճ է, եւ այսօր ալ Մատթէոս Սրբազան անոնց ընթերցումն աւելի լաւագոյն համարեց, պէտք եղած բացատրութիւններն՝ իւրաքանչիւր գիր ժողովին հաղորդած ատեն՝ կարենալ տալու համար, ուստի կառավարկեմ որ Օրենսդրութիւն մը կազմուի, բայց չէ թէ Վարչութիւնն իբր ամբաստանեալ դատելու համար, այլ անոր համարն եւ բացատրութիւնները լսելու, զորս՝ ինչպէս

Մատթէոս Սրբազան յայտարարեց մատուցանել կը բաղձայ, անոր թղթերը քննելու եւ Ազգային ժողովին տեղեկագիր մը տալու համար : Այս գործողութեանն ետեւ՝ կրնայ որոշուիլ թէ դատական Օրենսդրութեան մը զինք հա՞րկ է թէ ոչ :

Տ. ՄԱՏԹԵՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ.— Փիլիսոփայոս եպիսկոպոսի պաշտօնականութեան վերաբերեալ գրութեանց մէջ քաղաքական կէտեր չկան : Իսկ պատուիրակաց պաշտօնին վերաբերեալ մասերը կրնան յապաւիլ, եւ այնպէս հրատարակուիլ : Ես այդ գրերը Մասնախումբի մը քննութեան ներկայելու առաջարկը չեմ ընդունիր, Իրաւասութեան դիւանը տեսաւ արդէն զանոնք : Եւ իւր եղբակացութիւնը բերաւ, եւ եթէ ժողովը գօհ չըլլար անկէ, պէտք է ուրեմն ուղղակի ինք կարգայ այդ գրերը : որոնց մէջ պիտի տեսնէ թէ ինչպէս փիլիսոփայոս եպիսկոպոս ժողովներ լուծեր եւ ինչե՞ր տեղի ունեցեր են Տիգրանակերտի մէջ :

ՄԷԶՊՈՒՐԵԱՆ Ն. ԷՖ.— Խօսքս քիչ մ'առաջ ըսածիս կրկնութիւնը պիտի լինի : Ամբաստանող եւ ամբաստանեալ մը կայ, ի՞նչպէս կարելի է դատել զանոնք առանց լսելու : Եթէ Օրենսդրութեան մը կազմութիւնն առաջարկեցինք, այս սկզբան գործողութիւնն ապահովելու եւ ժողովը ժամավաճառ չընելու նպատակաւ էր, եւ չէ թէ փիլիսոփայոս եպիսկոպոսը պաշտպանելու համար : Մենք Վարչութիւնը չենք ամբաստանել, այլ իրեւ բարեկամ այս արդարութեան սկզբան՝ կըսենք թէ փիլիսոփայոս եպիսկոպոսը լսել պէտք է, դատական Օրենսդրութեան մը յանձնարարութիւն մը յանձնելով գործին քննութիւնը :

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ.— Երկու խօսք կուղեմ ընել, բայց նախ ներում կը խնդրեմ ժողովէն որ չպիտի կրնամ բարձր խօսիլ, վասն զի կուրծքս անհանգիստ է այսօր : Մինչեւ հիմա ինչ որ խօսուեցաւ, լսեցի ուշադրութեամբ, առաջարկութիւններն իրարմէ կը տարբերին, բայց կը գիտեմ որ սկզբան մասին

ամենքն ալ համաժողովուն : Ատենապետներուն ամէնն ալ խնդրոյն զլիաւոր կէտին վրայ կուգան կը միաբանին , եւ միահամուռ կը յայտարարեն թէ վարչութեան գէտ խնդիր չունին եւ զայն ամբաստանեալ չեն նկատեր , ուրեմն այս տեսութեամբ կրնան ամէնքն ալ հանդարտ սրտով քուէարկել իրաւասութեան դիւանի տեղեկագիրն եղբակացութիւնն , եթէ իրենց ըսածն անկեղծ էր , հայերէն էր , եւ ես կրցի ըմբռնել : Բայց կասկած մ'ունին որ մի գուցէ այդ եղբակացութիւնն՝ որ երկու կէտ կը սկսուինակէ , քուէարկելով , անոր երկրորդ կէտն՝ որ Տիգրանակերտի անցից քննութիւնը կը յանձնարարէ , վտանգի ենթարկի , ուստի կը վարանին քուէ տալու , բայց այս վարանումն ինչպէս ըսի , լոկ կասկածի մ'արդիւնքն է , եւ այս կասկածները կրնան անհետիւն երբ խնդրոյն վրայ կատարեալ ծանօթութիւն ստանան եւ զայն իմաստասիրեն : Արդէն առաջարկութիւն մը կայ , որ վարչութեան պաշտօնական գրութիւնները տեսնել կուզէ եւ անոնց տպագրութիւնը կը պահանջէ ատենագրութեան միջոցաւ , խնդիրն ուսումնասիրելու համար : Այս մասին ի սկզբան զիտողութիւն եղաւ որ սոյն գրութիւններն չեն կրնար հրապարակել , բայց այսօր Մատթէոս Սրբազան յայտարարեց որ փլիպպոս եւս փլիպպոսի պաշտօնականութեան վերաբերեալ գրութեանց մէջ քաղաքական կէտեր չկան , եւ պատուիրակաց պաշտօնին վերաբերեալ մասերն կրնան ի բաց թողուիլ . սակայն թերեւս այդ յայտարարեալ գրութիւնները թողովը չգոհացնեն , ուստի լաւագոյն է որ թողովը զանոնք ամբողջապէս տեսնէ : Արդ՝ նկատելով որ խնդիրն որոշում մ'առնելու համար հարկ եղած է որ կատարեալ ծանօթութիւն եւ տեղեկութիւններ տրուին թողովին , նկատելով նաեւ որ արդէն ատենադիր փակելու ժամն հասած է , եւ ամէնքն ալ ցուրտէն անհանգիստ ըլլալով մեկնիլ կաճաղարեն , եղած առաջարկութեանց իրերս մէկ ամիսփութեան կառավարեալ խնդիրը յառաջիկայ նիստին թողով մանցնել ատենագրութեան մէջ իրաւասութեան դիւանի կողմէ եկած կրկին տեղեկագրերն եւ լսելով վարչութեան ըացատ-

րութիւններն եւ պաշտօնական գրութեանց ընթերցումն , պէտք եղած որոշումը տալ փլիպպոս եւս փլիպպոսի խնդրոյն նկատեալ :

ՁԱՅՆԵՐ . — Քուէ , քուէ :

ՓԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կը համակերպում Մէրեմ-Գուլի էֆէնտի առաջարկութեան , սա պայմանաւ սակայն որ . թողովը այժմէն որոշէ չտալ որ եւ է վճիռ՝ առանց թէ վարչութեան եւ թէ փլիպպոս եւս փլիպպոսի ըացատրութիւնները լսելու :

ՁԱՅՆԵՐ . — Ի՞նչ կը նշանակէ այդ պայմանը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ պայմանն աւելորդ է , երբ խնդիրն լուսաբանուելով իւր որոշումն ընդունելու աստիճանին դայ յանգի , թողովը գիտէ թէ ինչպէս պէտք է վճիռ տալ եւ նախորդ պայմաններ ընդունելու պէտք չունի : Այժմ՝ դառնալով մեր վիճաբանութեան նիւթին՝ զայն բաւական պարզուած կը դնեմ , եւ կը կարծեմ թէ այլ եւս թողովը կրնայ իւր կամքը յայտնել : Երկու գլխաւոր առաջարկութիւն կայ , մին փափաղեան էֆէնտի կողմէ , որ պաշտօնական գրութեանց տպագրութիւնը կը պահանջէ . . . :

ՓԱՓԱՄԱՃԵԱՆ Ս. ԷՖ. — Ես ետ կ'առնում իմ առաջարկութիւնս եւ Մէրեմ-Գուլի էֆէնտի առաջարկին կը յարիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն կը մնայ Մէրեմ-Գուլի էֆէնտի առաջարկը , որ է խնդիրն յառաջիկայ նիստին թողուի , որպէս զի իրաւասութեան դիւանի կողմէ եկած տեղեկագրերը ատենագրութեան մէջ անցնելով տպեալ ներկայանան , եւ թողովը լսելով նոյն նիստին մէջ վարչութեան պաշտօնական գրութեանց ընթերցումն , եւ տալիք ըացատրութիւնները , պէտք եղած որոշումը տայ իրաւասութեան դիւանի տեղեկագրին վրայ : Այս առաջարկը քուէի կը դնեմ այժմ :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին խնդիրը քուէի կը դնէ , եւ թողովը մեծազոյն մասամբ ԿՈՐՈՇԷ ըստ առաջարկութեան Մէրեմ-Գուլի էֆէնտի խնդիրը յառաջիկայ նիստին թողով ատենագրութեան մէջ անցնել իրաւասութեան դիւանի տեղեկագրի , լսել Տիգրանակերտի խնդրոյն վերաբերեալ թղթոց ընթերցումն եւ վարչութեան ըացատրութիւններն , եւ այնուհետեւ պէտք եղած որոշումը տալ իրաւասութեան դիւանի տեղեկագրին վրայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենադիր փակելէ առաջ՝ հարկ կը համարիմ յայտնել թողովիդ , որ Խարբերդու երեսփոխանական ընտրութեան խնդրոյն վրայ՝ Նախաձեռնութեան դիւանն

իւր տեղեկագիրը յանձնեց Նիւանիս , որ պիտի կցուի այսօրեայ նիստի ատենագրութեան եւ հետեւաբար անցնի օրակարգին մէջ :

ՁԱՅՆԵՐ . — Շատ աղէկ :

Ատենադիր փակելու ժամ 10 ին , յառաջիկայ նիստը 15 օրէն գումարելու պայմանաւ :

Ատենադիր Ատենապետ
Մ. Տ. ՄԷԼԻՔԵԱՆ Տ. ԵՈՒՍՈՒՅԵԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՆԱԽԱԶԵՌՆՍԻԹԵԱՆ ԴԻԻԱՆԻ

Վսեմափայլ Ատենապետ Ազգային Ժողովոյ

Թիւլպէնտեան Նիկողոս էֆէնտին Խարբերդու գաւառէն Երեսփոխան ընտրուած և իւր ընտրութեան վաւերացումն Ազգային Ժողովէդ զըացուած ըլլալով , յիշեալ էֆէնտին խնդրագիր մը մատուցել է թողովիդ , որ Նախաձեռնութեան դիւանիս յղեալ է՝ Յունիս 22ի նիստին՝ ի նախաքննութիւն :

Յիշեալ խնդրագիրն Յունիս 14ին ընդունած է թէ և 2եր Նախաձեռնութեան դիւանը , սակայն՝ նոյն միջոցին նախա-

քննելի նախընթաց խնդիրներ ունենալէն զատ՝ իւր անդամոց զանազան ազգային պաշտօններով ծանրաբեռնեալ լինելուն , ասոնցմէ միոյն պատահական ճամբորդութիւն մ'ընելուն և գըլխաւորաբար՝ խնդրոյն մէջ նուրբ քննութեանց կարօտ շատ կէտեր գտնուելուն պատճառաւ , կը ցառուի որ չկըցաւ աւելի կանուխ ներկայել սոյն տեղեկագիրն , և կը յուսայ թողովիդ ներողամտութեան հանդիպիլ այս մասին :

Թիւլպէնտեան էֆէնտի իւր խնդրագիրը կսկսի և կը վերջացնէ իւր անհատական ազգային իրաւանց և կացու-

Թեան մասին մեկին որոշում մը խնդրելով, զորս վտանգի ենթարկեալ կը նշկատէ, խորհրդու գաւառին երեսփոխանական ընտրութեան նկատմամբ Ազգային ժողովոյ դրած տնօրինութեամբը: Վասն զի յիշեալ որոշմանէն կը հետեւցնէ որ, եթէ ինքն երեսփոխան չէ կարող լինիլ, ուրեմն և ո՛չ ընտրելի և ո՛չ իսկ ընտրող կարող է լինել, և թէ զրկման կը դատապարտուի իւր ազգային իրաւանց վայելմանէն: Ուստի կը բողոքէ դառնապէս, անիրաւ և ապօրէն հռչակելով առանց դատաստանի և դատաւճռի ՚ի բացակայութեան իւրում տրուած այդպիսի որոշում մը: Հետեւաբար խորհրդու գաւառէն առ ինքն վերջնապէս երեսփոխանական աթոռոյ իրաւունքը պաշտպանելն Ազգային ժողովոյ թողովոյ յօժարակամ, իւր ազգային անհատական իրաւանց առ ինքն վերադարձը թախանձանօք կը պահանջէ թիւլւայէնտեան էֆէնտի, ՚ի հարկին իւր երեսփոխանութիւնն ալ առ այն զոհելու պատրաստականութիւն յայտարարելով: Թէ և պայման կը դնէ որ Ազգային ժողովը՝ այս զոհողութիւնն իրմէ պահանջելու համար՝ այն վարմունքը բռնէ իւր նկատմամբ, ի՛նչ վարմունք որ արժան և օրէն է բռնել իւր ազգային իրաւանցը կատարելապէս և լիովին վայելմանը մէջ գրտնուող անհատի մը նկատմամբ, որով իւր պատրաստականութիւնն ու պայմանը յոռի չըջանի մը մէջ զիրար կընդգրկեն:

Չեր նախաձեռնութեան գիււանը՝ թիւլւայէնտեան էֆէնտի խնդրագիրն իմաստասիրելէ ետեւ, մեղադրելի չգրտնէր զնա: Ի՛ր նկատմամբ տրուած որոշման վրայ յանձնարինս ցաւած ըլլալուն համար, վասն զի անթերի կերպիւ կա-

տարուած ընտրութեանէ ծնեալ երեսփոխանի մը մերժուիլը՝ մե՛ծ և նշանակութեան արժանի կարեւորութիւն ունեցող խնդիր մ'է. որ առաջին անգամ տեղի կունենայ մեր մէջ, և դժբաղդաբար թիւլւայէնտեան էֆէնտի կը վիճակի ենթարկել այս հաղուադէպ տնօրէնութեան:

Անակնկալ և անբնական չէ ուրեմն որ թիւլւայէնտեան էֆէնտի վրայ ծանր և ցաւազին տպաւորութիւն մ'ըրած ըլլայ ժողովոյ որոշումն: Եւ ահա այս տըպաւորութեան ներքեւ՝ թիւլւայէնտեան էֆէնտի կուգայ իւր վերոյիշեալ խնդրագրով պահանջել թախանձագին որ իւր ազգային անհատական իրաւանց վիճակն որոշակի պարզուի, և կարծեմք թէ իրաւունք ունի, վասն զի այս կէտն անորոշ մնացած կը թուի մեզ:

Այլ ըստ որում թիւլւայէնտեան էֆէնտի խորհրդու երեսփոխանական աթոռոյն իրաւունքն ալ բռնաբարեալ կը նկատէ և անոր պաշտպանութիւնն Ազգային ժողովոյ կը թողու, հետեւաբար երկու տարբեր խնդիր կը բերէ նորա խնդրագիրն առ Ազգային ժողովը:

Ա. Թիւլւայէնտեան էֆէնտի ընտրութեան մասիւ ժողովոյ տուած մերժման որոշումն արդար և օրինաւոր է, թէ ոչ:

Բ. Նոյն որոշման հետեւանօք թիւլւայէնտեան էֆէնտի ազգային անհատական իրաւունքն անվթար մնացած են, այսինքն ընտրող և ընտրելի է՝ նա, թէ ոչ:

Չեր նախաձեռնութեան գիււանը կարի բանաւոր կը գտնէ այս բաժանում մը, զի կը կարծէ թէ յիշեալ երկու կէտերը մի առ մի նկատողութեան առնուլ կարելի կը լինի կնճիւղը լուծել, և ճշ-

մարտութիւնն ստուգապէս երեւան հանելով լուծման յանդիւ: Ուստի խնդիրն ինքն առնէ և անոր յարակից պարագաները կը ցածին չափ խուզարկելէ յետոյ՝ կը ներկայէ Ձեզ իւր քննութեանց արդիւնքն, սկսելով թիւլւայէնտեան էֆէնտի խնդրագրին պարունակած այն պատճառաբանութիւններէն, որոցմով տիրող օրինաց հակառակ և հետեւապէս անիրաւ կը նկատէ նա իւր մերժումն յազգային երեսփոխանութեանէ: Վասն զի դիտելի է որ եթէ այս կէտն ինպատ խնդրարկուին լուծում մ'ընդունի, երկրորդն ընդ նմին պարզուած կը լինի:

Թիւլւայէնտեան էֆէնտի կը պատճառաբանէ թէ՝ « ժողովը իւր որոշումը քանի մ'երեսփոխանաց ամբաստանութեան, ոսոխութեան ու վկայութեան վրայ հիմնած է »:

Խորհրդի ընտրութեան տեղեկագիրն երբ Ազգային ժողովոյ որոշման ներկայացուեր է, առաջին խօսք առնող երեսփոխանը՝ թիւլւայէնտեան էֆէնտի առ ժողովը ըրած մէկ նախատինքն յիշեցուցեր և անոր ծանրութիւնը զգացնելու համար խղճի ակնարկութիւն մը ընելով եզրակացուցեր է թէ՝ գործ չունի նա ժողովոյ մէջ և թէ պէտք չէ վաւերանայ նորա ընտրութիւնն: Այս առաջարկն անմիջապէս կրկնող ալ ունեցեր է թէպէտ, և սակայն թիւլւայէնտեան էֆէնտին անպաշտպան չէ մնացեր և իրեն նպաստաւոր բերան չէ պակսեր բոլորովին: Իւր պերճախօսութեամբն համբաւաւոր և եկեղեցական գիրքովը նշանաւոր երեսփոխան մը ջան ի գործ դրեր է նախորդ կարծիքն հերքելու, և ի՛նչ փաստ որ կարելի էր ունենալ յառաջ բերեր է ժողովը համոզելու համար:

Այսու ամենայնիւ ժողովը առաջին կարծիքն ընդգրկեր է և ընտրութիւնը մերժեր է:

Իրողութիւնն այս ըլլալով, անոր մէջ ամբաստանութիւն ոսոխութիւն և չէ. դրտնելու համար թիւլւայէնտեան էֆէնտի խնդրագրին մէջ ալ ապացոյց կամ փաստ մը չերեցաւ մեզ. այլ միայն ամբաստանութեան յիշատակութիւն մը, զոր անխիղճ անուանելէ և զայն արտասանող բերանն ապագային պատասխանատու կը համարիմքս ըսելէ անդին չէ անցած թիւլւայէնտեան էֆէնտի: Եւ հետեւաբար այս պատճառաբանութիւնն իւր խնդրոյն ու է ոյժ չտալէ զատ՝ կերպիւ իւր ժողովոյ արժանապատուութեան ուրացումն ըլլալու գոյն մ'առած է, թերեւս նոյն իսկ թիւլւայէնտեան էֆէնտի նպատակին հակառակ:

Թիւլւայէնտեան էֆէնտի կը պատճառաբանէ նաեւ թէ՝ « Ոչ ոքի ապագայ դատապարտութեան պատահականութիւնը կամ հաւանականութիւնն արգելիչ պատճառ մը կրնայ լինիլ ի ներկային նորա իրաւանց վայելմանը »:

Շատ ճիշտ է այս սկզբամբ և իրաւ, բայց չեմք կարծեր որ ներկայ խնդրոյն յարակցութիւն մ'ունենայ:

Այս պատճառաբանութիւնն այն ատեն տեղի կրնար ունենալ երբ ժողովը թիւլւայէնտեան էֆէնտի համար ապագայ դատապարտութեան մը հաւանականութիւնն իրեն տեսակէտ ունենար և իւր վճիռն անոր վրայ հիմնելով խորհրդու գաւառին երեսփոխանական ընտրութիւնը մերժած ըլլար: Բայց իրողութիւնն, որու ամփոփումը քիչ մ'առաջ լսեցիք, այսպիսի բան մը չհաստատեր,

Ժողովոյդ մէջ յայտնուած կարծիքներն թիւլակէտեան էֆէնտիի անցեալին նըկատմամբ եղած են, և ո՛չ թէ անոր ապագային:

Թիւլակէտեան էֆէնտի կը պատճառարանէ դարձեալ թէ՛ «Ներկայ խնդրոյն մէջ՝ փոխանակ ընտրական օրինաց ոմանց գիպուածական կամքն իշխած է Ժողովիդ վրայ»:

Նախաձեռնութեան դիւանս կը կարծէ թէ՛ Ժողովդ չկրնար այսպիսի վերագրութեան մ'ողին ընդունել և զայն չը մերժելու հանդուրժել, քանի որ պարզապէս սա իմաստը կուտայ թէ՛ թիւլակէտեան էֆէնտիի ընտրութեան խնդրոյն առթիւ մէկ քանի երեսփոխանք նորա վաւերացմանն աննպատ կարծիք յայտնած ըլլան, և Ժողովին միւս բոլոր անդամներն, իբրեւ անգիտակ իրենց կոչման և իբրեւ անձեռնհաս իրենց իրաւանց կիրառութեան, այն մէկ քանիին կամաց հպատակած լինին, օրէնք և իրաւունք առ ոչինչ զրկելով:

Բայց որպէս զի Ժողովդ այսօրինակ կամայական տնօրէնութիւն մ'ընելու կըրաւորական դիրքն առած ըլլար, որ շատ ծանր և մինչեւ իսկ անարգական ակնարկութիւն մը ըլլալ կը թուի մեզ թիւլակէտեան էֆէնտիի կողմէ, պէտք էր նախ Ժողովին մէջ ուղղակի կամ անուղղակի կերպիւ առաջարկող գտնուիլ որ, այս անգամ խորհրդու գաւառական ընտրութեան համար ընտրական օրէնքը չբռնուի ուղեցոյց և ըստ հաճոյս՝ թիւլակէտեան էֆէնտիի ընտրութիւնը մերժուի:

Մենք այսիմաստ առաջարկութիւն մը ընող չգտանք ատենագրութեանց մէջ, և

կարծեմք թէ չէր ալ կրնար գտնուիլ Մեր գտածը սա է որ, եղելութիւն մը յիշեցուցեր են յատենի աստ, զոր ընտրեալն իւր հեղինակութեամբ դործեր է կանխաւ նոյն իսկ Ազգային Ժողովոյդ նկատմամբ: Պաշտպանութիւն է թիւլակէտեան էֆէնտի և մինչեւ իսկ ներուժն ինքուրեք է անոր համար, բայց առարկեր են որ խնդիրն անձի չլերարերիւր, այլ ազգային վերագոյն իշխանութեան: Վերջապէս Ժողովդ ալ իւր որոշումը տուեր է, ո՛չ թէ ընտրութեան տեղի կազմին մէջ օրինական թերութիւն նշմարելով, այլ ընտրեալին արժանեաց և հանգամանաց վրայ իւր ունեցած կարծիքն ներշնչուելով: Եւ այս ամենէն յետոյ Ատենապետ էֆէնտին հրաւեր ալ կարգացեր է որ քուէարկութեան և որոշման վրայ եթէ ըսելիք մ'ունեցող կայ, զայն իբրեւ խնդիր ներկայացնէ: Բայց ո՛չ այն օրն և ո՛չ ալ այնուհետեւ՝ չէ գտնուեր և ո՛չ մի երեսփոխան որ այն մասին՝ ըստ օրինի՝ խնդիր մը բերած ըլլայ Ժողովիդ:

Թիւլակէտեան էֆէնտիի մէկ պատճառարանութիւնն ալ որ իւր նախընթացին իբր ապացոյց մէջ բերուած ըլլալ կը թուի, սա է թէ՛ «Ներկայ երեսփոխանաց մեծագոյն մասը ձեռնպահ մնացած է քուէարկութեան մէջ» զոր խորհրդարանական լեզուաւ լուեւայն բողոք կը մեկնէ, և իւր այս ենթադրութեան մեծ ու նշանակութեան արժանի կարեւորութիւն մը կրնձայէ:

Մեզ կը թուի թէ այս կէտն՝ զնախորդը չապացուցանելէ զատ՝ նոյն իսկ զայն ջրելու կը ծառայէ: Վասն զի նախ թիւլակէտեան էֆէնտի կը սխալի, կարծելով թէ ձեռնպահութիւնը՝ կատարուելու վրայ եղող դործողութեան դէմ

լուեւայն բողոք կը նշանակէ խորհրդարանական լեզուաւ: Ձեռնպահութիւնը խորհրդարանական լեզուաւ կը նշանակէ, համամիա լինիլ քուէարկուաց մեծագոյն մասին, ՚ի բաց առեալ այն պարագաներն՝ յորում քուէարկութեան ձեւին կամ սկզբանն հակակարծիք կը գտնուի երեսփոխան: մը և իւր ձեռնպահութեան պատճառն յայտնապէս արձանագրել կուտայ ատենագրութեան մէջ: Եւ այս ալ նոյն երեսփոխանին իւր անձն ապագային առջեւ ազատելու միայն կը ծառայէ, և ո՛չ թէ քուէարկութեան օրինաւորութիւնն եղծանելու:

Ասկից զատ՝ բնական համաձայն չէ ուղիղ բանի՝ ենթադրելար, ձեռնպահ երեսփոխանք թիւլակէտեան էֆէնտիի ընտրութիւնը մերժելու համակարծիք չըլլալով, կամ աւելի պարզն ըսելու համար՝ նորա ընտրութիւնը վաւերելու կարծիք ունենալով, դիտմամբ ձեռնպահ կեցած լինէին, որպէս զի կատարուելու վրայ եղող դործողութեան դէմ, այսինքն ընտրութիւնը մերժելու համար Ժողովով տրբուած որոշման դէմ, լուեւայն բողոքած ըլլային ձեռնպահութեան ձեւին տակ:

Այսպէս ենթադրելու համար հարկ կըլլար նախապէս ենթադրել որ, թիւլակէտեան էֆէնտիի ակնարկած երեսփոխաններն, ո՛չ միայն քուէարկութեան օրինաց անհմուտ էին և անվարժ, ո՛չ միայն անգէտ էին թէ անձնիւր երեսփոխան անբաւարար իրաւամբ ազատ է իւր կարծեաց հետեւելով որ և է խնդրոյ վրայ թեր կամ դէմ քուէ տալու, այլ և այնքան պտրղամիտ էին որ, իրենց կարծիքն իրենց պահելով, ասպարէզն հակակարծիք եղողներուն կը թողնին բարեմտաբար, և իրենց չուղածին կա-

տարման վկայ կը հանդիսանային:

Կարծէ դիտել մանաւանդ որ, ըստ թիւլակէտեան էֆէնտիի, բողոքելու նըկատակաւ ձեռնպահ կեցողները բազմաթիւ էին ո՛չ միայն ընտրութիւնը մերժելու համար քուէ տուողներէն, այլ և ամբողջ քուէարկուներէն, որոց մէջ էին անշուշտ մերժում չուղող և ընդունելութիւն քուէարկողներն:

Արդ եթէ այդ ձեռնպահներն, ինչպէս կըրէ թիւլակէտեան էֆէնտի, համակարծիք չլինէին սորա ընտրութիւնը մերժելու և ստուգիլ մեծագոյն մաս կազմէին, ձեռնպահ պիտի մնային արդեօք, և իրենց քուէներն՝ ընդունելութիւն քուէարկողներուն հետ՝ ընտրութիւնը վաւերելու համար չպիտի տային. իսկ եթէ մեծագոյն մաս չէին կազմեր, արժէք և նշանակութիւն պիտի կրնար ունենալ իրենց բողոքն, եթէ նոյն իսկ կենդանի ձայնիւ յայտարարէին:

Այս հարցմանց ստորասական պատասխան չէր կրնար տրուիլ, և այս վիճակին մէջ հարկ անգամ չէր մնար քննելու թէ՛ ձեռնպահից թիւն աւելի էր իրօք քուէարկուաց թիւէն:

Այսու ամենայնիւ Ձեր նախաձեռնութեան դիւանս այս կէտն ալ քննելու չդանդաղեցաւ և ատենագրութեան մէջ խուզարկելով գտաւ որ խնդրոյ նիւթ եղող որոշումը տրուած նիստն՝ որ ՚ի 1 յունիսի, 28 երեսփոխանաց ներկայութեամբ բացուեր է, և ատենական դործողութեանց շարքին մէջ՝ վիճարանութեան ենթարկեալ առաջին խնդիրը խորհրդու ընտրութեան տեղեկագիրն եղեր է, ատենանն բացումէն կարճ միջոյց մը յետոյ, որոյ պահուն ներկայ երեսփոխա-

նաց հաւանական թիւն՝ անհերքելի կերպիւ՝ 30ը չէ կրցած լրացնել։ Վասն զի խնդրոյն որոշումը տրուելէն յետոյ, երբ Ստեփան վաչան օրինական դիտողութիւն մ'ըրեր է, և այն պատճառաւ յարուցեալ վիճաբանութեան վրայ Ատենապետ էֆէնտին ժողովոյ քուէն խնդրեր է, նոյն պահուն իսկ, յորում ալ եւս՝ թիւլպէնտ՝ ճեան էֆէնտիի կարծեօք ալ ձեռնպահութեան պատճառ չէր մնար, 18ի դէմ հաղիւ 14 երեսփոխանք գտնուելու են վիճաբանութեան շարունակութիւնն ուղղորդող բաղկացեր են բնականաբար, թիւլպէնտ՝ ճեան էֆէնտիի համար նպաստաւոր կարծիք ունեցողներէն զատ, անպայման ներողամտներէն, օրինաց ծայրայեղ նախանձախնդիրներէն և առաջին քուէարկութենէն յետոյ ժողովարան հասնելով խնդիրն իմանալու հետաքրքիրներէն։ Եւ դարձեալ այս ամէնքը մեծամասնութիւն չեն կազմեր եղեր, վասն զի վիճաբանութեան փակումն ուղղորդերը շուրջ 30 0/0 առաւելութիւն ունեցեր են իրենց վրայ։

Արդ քանի որ հետզհետէ հասնողներով 32ի կը յանգին այս երկրորդ քուէարկութեան մասնակցողներն, առաջին քուէարկութեան միջոցին 30էն պակաս կըլլար անշուշտ ներկայից թիւն, և ըստ որում 16ի դէմ 2, ընդ ամենը 18 երեսփոխանք մասնակցեր են առաջին քուէարկութեան, ըսել կըլլայ թէ՛ որքան ալ բաղժութիւն լինէին ձեռնպահ կեցողներն, 12էն նուազ թիւ մը կուենային և այնպիսի համեմատութիւն մը կարտադրէին, որ սակայ տեղի կուենայ քուէարկութեանց մէջ, և զգարապէս տարբերելով թիւլպէնտ՝ ճեան էֆէնտիի ենթադրութենէն, անոր անհիմն ըլլալը կը հաստատէ։

Այս տեսութեամբ 2եր նախաձեռնութեան դիւանը չկրցաւ համադուիլ որ ձեռնպահ երեսփոխանք քուէարկութեան մասնակցողաց թիւէն աւելի թիւ ունեցած լինէին և թիւլպէնտ՝ ճեան էֆէնտիի իրենց վերադրած դիտումն ունենային։ Նոքա կամ խնդրոյն սկիզբէն հասած չըլլալով կարծիք գոյացնելու ատեն գտած չէին, և կամ ժողովոյ մեծագոյն մասին համակերպիլ կուզէին։ Եւ եթէ ասոնց մէջ դուրս տնպատճառ նշանակութիւն մը տալ հարկ լինէր երեսփոխանաց ոմանց սոյն խնդրոյն մէջ ձեռնպահութեան և զոյն դիտման մը վերադրել, ամենէն բանաւորն այն կրնար թուիլ, որ յիշեալ երեսփոխանք արգահատական զլացմամբ թիւլպէնտ՝ ճեան էֆէնտիի մերժման վրայ ցաւակցութիւն յայտնելու դիտումն ունեցած ըլլային։

Ասոնցմէ զատ՝ թիւլպէնտ՝ ճեան էֆէնտի կը պատճառաբանէ թէ՛ «Ազգային ժողովը ձեռնհաս չէ լրագրական կամ անհատական յանցանք պատժելու»։ Եւ դարձեալ թէ՛ «Ազգային ժողովը իրաւունք չունի՝ զոմն իբրեւ երեսփոխան ճանչելէ առաջ՝ նորա դէմ ատենական կամ կանոնադրական պատժոյ վճիռ արձակելու»։

Թիւլպէնտ՝ ճեան էֆէնտի այս պատճառաբանութիւններն ընելու համար կը մտածէ որ, Ազգային ժողովը իւր ընտրութիւնը մերժելով, թերեւս մամուլի միջոցաւ իրեն պատուոյն դէմ գործուած կալծեցեալ յանցանք մը պատժել խորհած ըլլայ։ Եւ կը հարցնէ թէ ինչո՞ւ միանդամայն չէ խորհեր որ այս պարագային մէջ եթէ ինքն իբրեւ լրագրագետ նկատուած էր, և յանցանքն լրագրական,

Ազգային ժողովը չունէր իրաւասութիւն և ձեռնհասութիւն լրագրագետ մը կամ անհատ մը պատժելու։ Իսկ եթէ իբրեւ երեսփոխան նկատուած էր ինքն, և յանցանքն երեսփոխանական, Ազգային ժողովը չէր կրնար իրեն դէմ ատենական կամ կանոնադրական պատժ տնօրինել, քանի որ իւր ընտրութիւնը չէր վաւերացրեր և զինքն երեսփոխան չէր ճանչցեր։

Այս պատճառաբանութեանց նկատմամբ ձեր նախաձեռնութեան դիւանին ըրած քննութիւնն այն կարծիքը կը ներշնչէ իրեն թէ՛ Ազգային ժողովը ոչ իբրեւ լրագրագետ պատժելու ըզրէ թիւլպէնտ՝ ճեան էֆէնտի և ոչ իբրեւ երեսփոխան, այլ գլխովին տարբեր տեսակէտ ունեցած է ժողովը, որոշած մերժումն, ինչպէս կերևի ատենադրութեանց վերլուծմանէն։

Թիւլպէնտ՝ ճեան էֆէնտի իւր Լրագիր անուն օրաթերթին միջոցաւ այնպիսի հրատարակութիւններ ըրեր է ազգային խնդրոյ նկատմամբ, որք բոլոր խոհական ազգասէրներուն խորին ցաւ պատճառած ըլլալ կը թուին, ինչպէս և անձնիւր երեսփոխանի կողմէ ազգային նուիրական շահուց մնասակար և վտանգաւոր նկատուած։

Խարբերդի ընտրութեան տեղեկագրոյն ներկայացած օրն, երբ այն՝ ժողովոյ քուէարկութեան յետոյ օրինական դիտողութեան մ'առթիւ վիճաբանութիւն է բացուել, այդ հրատարակութեանց խնդիրն յիշատակուել է, որոյ մասը կը կազմէր արդէն առաջին ընդդիմախօս երեսփոխանին առարկած նախատական յօդուածն, և ժողովոյդ ու-

շաղթութիւնն անոնց վրայ հրաւիրուել է մասնաւորաբար։

Թիւլպէնտ՝ ճեան էֆէնտի իբրեւ մարդ անհատական իրաւամբ ազատ էր անշուշտ ուղած կարծիքները նախընտրելու և իբրեւ խմբագիր՝ լրագրական օրինօք ազատ էր զանոնք հրատարակելու։ Ինչպէս որ իւրաքանչիւր երեսփոխան ազատ էր զանոնք իմաստասիրելով գնահատելու, և անոնց օգտակարութեան կամ մնասակարութեանը մասին իւր ազատ դատողութեամբ կարծիք մը գոյացնելու։

Կերևի թէ՛ երեսփոխանք դիտէին որ թիւլպէնտ՝ ճեան էֆէնտի նոր—Դարու խմբագրին զինքը մատնիչ կուշելուն առթիւ 1877 Օգոստոս 17 ին դրած էր թէ՛

Մեր մէջ կարգ մ'անձինք կան, որք իրենց բան գործ ըրած են ժողովուրդն Օսմանեան կառավարութեան դէմ տեղու ցուցնելու քրիստոնեայն տաճկին հետ միշտ խռով եւ առանց սլահել։

Եւ դարձեալ թէ՛

... կատարուած զեղծմանց համար կառավարութեան դէմ գանգատիլը կառավարութիւնը պատասխանատու եւ թելադիր ըմբռնել կը նշանակէ մեզ նկատմամբ գործուած ահաբեկութեանց, եւ կառավարութեան մը դէմ գանգատիլը այդ կառավարութեան դէմ բարոյապէս աստատմիլ ըսել է։

Դարձեալ՝

... մեր անփոփոխելի սկզբունքն այս ըլլալուն վրայ կը պնդեմք, եւ զոր յաջորդ յօդուածովն ալ պիտի հաստատեմք, ցոյց տալով միանգամայն թէ ո՞վ է ազգին մատնիչն ու դաւաճանը, մե՞նք թէ՛ նոր դարն եւ իւր ներկայացուցած կուսակցութիւնը։ (Այսինքն վերը յիշած կարգ մ'անձինքը։)

Երեք օր ետքն ալ, Օգոստոս 20ին

հետեւեալ տողերը պարունակած էր թիւը պէնտճեան էֆէնտիի թերթին :

Ըսինք թէ մեր ազգին մէջ մաս մը կայ, արդարեւ խիստ աննշան եւ փոքրածիւ, որոյ քաղաքականութիւնն է ազգը միշտ տեղոյ եւ խոռով պահել կեդրոնական կառավարութեան դէմ, եւ ազգին փրկութեան յոյսն ու օգնութիւնը օտար տէրութիւններէն ակնկալել, կարծելով ծանծաղամտաբար թէ օտար տէրութիւնք մարդասիրաբար պիտի աճապարեն թուրքխաքնակ ճնշեալ, հարստահարեալ եւ հալածանաց ենթակայ քրիստոնէայ ժողովուրդներուն պաշտպան կանգնելով ազատել զանոնք :

Եւ այս խօսքերն ըստ երեւութիւն չափաւորող ձեւով, իսկ ըստ իմաստին ծանրացնող եղանակաւ, շարունակուած էր սապէս :

Փութամբ ըսել թէ այդ մաս կամ կուսակցութիւն ըսածնիս ազգային ընդհանուր ժողովոյ ո՛ր եւ է մէկ կուսակցութիւնն ակնարկելով չեմք ըսեր, այլ ատի երեսփոխանական ժողովէն դուրս եւ յանգէտս սորա ծնունդ եւ գոյութիւն առած է . բայց իւր ազդեցութիւնն ու ներգործութիւնը մինչեւ իսկ Ընդհանուր ժողովոյ մէջ ալ կհասնի ու կը յայտնուի, իւր մէկ քանի բանիքուն ու գործունէայ անդամօք—այն է քանի մը աղայամիտ ու թեթեւօք լիկ երեսփոխանաց—ձեռօք, որոց մէջ առանց վարանելու կըսեմք թէ՛ բարձրատիճան ճանչցուած եկեղեցականներ ալ կան :

Դարձեալ նոյն յօդուածով

Ահաւտիկ բուն իսկ այսպիսի թիւը կարծեաց եւ համոզման մը վրայ (այսինքն Հայոց ներքին ցաւերն ու կրած տառապանքն ամենայն մերկութեամբ օտար տէրութեանց ծանուցանելու հաղորդելու պարտաւորութեան վրայ) խարըսխեալ հայկական կեղծ քաղաքականութեան քը հետեւանքն էր անցեալ տարի դաւաճական հարստահարութեանց յաւելուածական մասի մը Ընդհանուր ժողովոյ առաջ ելնելը . . . օտար լրագրաց միջոցաւ մասնաւոր թղթակցութեանց

հրատարակութիւնը . . . որոց մէկուն մէջ նամակագիրը խստիւ կը կշտարէր զՌուսիա՝ Քրիստոնէայ ըսելով մինակ Սլաւն ու Պուլիսը հասկնալուն համար, եւ կը մեղադրէր զՌուսիա հեգնելով թէ իրենց աչքին առջեւը թուրքիաբնակ Հայուն ալ քրիստոնէայ չհամարուելուն մինակ յանցանքն արդեօք՝ փոխանակ Բուսթիւնի մէջ ասորելու՝ Անատոլիոյ կողմէն ապրիլն եղած էր, որ իրենց առաջադրած բարեփոխման շրջանակէն դուրս կը ձգեն :

Դարձեալ

Եւ միայն այս քաղաքականութեան հետեւանքն է որ . . . անուանի ու բարձրատիճան եկեղեցական մը, (Ամենապատիւ Երիմեանին ակնարկելով) վեհափառ Սուլթանէն առ Սըրբազան Պատրիարքն ուղղեալ գոհունակութեան նամակին հաննելէն երկու օր ետքը Ս. Պատրիարքին գիւմելով, Ալաշկերտի եւ Պայազլիտի շրջակայներն Հայոց կոտորածին դէմ ի՞նչ դարման եւ մէկ մ'ալ չկրկնուելուն դէմ ի՞նչ միջոց ձեռք առած ըլլալը յայտնել, միանգամայն եւ կոտորածի դո՛չ գացող անձանց թիւն ու յիշատակագիրը ունենալ կառաջարկէ . . .

Եւ այս քաղաքականութեան հետեւանքն է որ Սըրբազան Պատրիարքին անձին վրայ՝ ազգին օսմանիէի պատուանշանաւ մը յարգուելուն ճիշդ հետեւեալ օրը Թորգոմեան մը Թայմը մը ձեռքն առած, ու շուրջ վարդապետ մ'ալ Տէյլի նիւղը բռնած, ազգին հարստահարութեանցը վրայօք իւր թէ անդղիական բարբառէնթիւն մէջն'եղած ըլլային—վտանգաւոր հարցումներ կուղղեն Սըրբազան Պատրիարքին, կերպիւ մը մեղադրել ուղեւով եւն :

. . . Մեր յաջորդ յօդուածով պիտի ցոյց տաւք թէ այդ մոլեալ ու աղղալիս քաղաքականութեանն ի՞նչքան դառն արդիւնները տեսաւ ու ճաշակեց ազգը, որոց հետեւանքէն ու ազդեցութենէն ազատիլն ալ դարձեալ իր բնազդունն եղած խոհական եւ լուրջ ազգային քաղաքականութեանը կը պարտի, կեղծ աղղատէրներէ շնասէ՛ղատ ուրիշ բան մը տեսած չըլլալով :

1878 Սեպտեմբեր 7 ին ալ, Կարնայ

Եւ շրջակայից դաղթականութեան խընդրոյն համար Սըրբազան Պատրիարք Հօր զԱզգային Ժողովն ի նիստ հրաւիրելուն առթիւ, այսպէս գրեր էր :

Իրաւունք կուտայինք թերեւս Ս. Պատրիարքին այսպէս աճապարանօք Ընդհանուր ժողովոյ գիւմելուն, եթէ փոքր ի շատէ յոյս մը կարենայինք ունենալ թէ այսպիսի քննադատական եւ ձախող պարագայներու մէջ Ընդհանուր ժողովը կարող է եւ գիտէ յաջող ելք կամ լուծում մը տալ դժուարութեանց կամ անյաջողութեան հանդիպող խնդրոց, բայց դժբաղդաբար կը պարտաւորվեք խոստովանելու թէ՛ ու եւ է դժուարութիւն մը լուծած ըլլալու կամ լուծելու կարողութիւն մ'ունենալը ապացուցանող ցարդ երբէք մէկ դործը տեսնուած չէ Ընդհանուր ժողովոյ իւր անցեալ պատմութեանը մէջ, բաց ի հատորներով լի չաղակրատութիւններէ, որք ու եւ է ներկայացեալ խնդրոյ մը լուծումը չդիւրացնելէն դատ, ընդհակառակն զայն առաւել եւս ճապարելու, խճողելու եւ անլուծանելի վիճակի մը հասցնելու նօյստած են :

Նոյն յօդուածին մէջ, Քաղաքական ժողովոյ նորընտիր անդամոց հետզհետէ հրաժարելուն վրայ խօսելով լալ, ըսած էր :

Կը ցաւիմք ըսելու, բայց հարկ է ըսել թէ՛ երեսփոխանական ժողովն ժամանակէ մը ի վեր իւր բռնած ընթացքով թէ՛ վարչական ժողովոց կացութիւնն անհնար ըրած է, եւ թէ իւր իսկ հեղինակութիւնը նուազեցուցած է, այնպէս որ շատ քիչ անձնական արժանիք եւ անձնապատուութիւն կրող մարդ մը՝ չատ դժուարաւ կատարուի կոր երեսփոխանական ժողովէն իրեն տրուած ազգային պաշտօն մը ընդունել գիշանելու, բայց ասի երեսփոխանական ժողովը դեռ անկարող եղած է նշմարել :

Արդ այսպիսի փորձառութենէ, գործունէութենէ եւ հեղինակութեան արժանիքէ ու պատկառանքէ զուրկ ժողովէ մ'ի՞նչ նա-

խաձեռնութիւն, ի՞նչ միջոց, ի՞նչ յաջողութիւն եւ ի՞նչ արդիւնք կրնայ սպասուիլ որ Ս. Պատրիարքն ալ իւր դժուարին ժամերուն մէջ՝ առ այն գիւմելու հարկ մը զգայ, կնճռոտեալ խնդրոյ մ'արագ լուծման միջոց մը ունենելու կամ ստանալու համար անկէ :

Նոյն տարւոյ Հոկտեմբեր 28 ին ալ, հրաժարեցուցեալ նախորդ երեսփոխան Պէկեան Թապէոս էֆէնտիի համար Ազգային Ժողովոյ ներկայացեալ առաջարկին օրակարգն անցնելու որոշման նկատմամբ խօսելով, հետեւեալ տողերը գրեր էր :

Երեսփոխանութիւնն իւր իմաստութեան եւ խոհականութեան չափը սոյն խնդիրն ընդունելուն կամ մերժելուն մէջը պիտի ցոյց տայ : Եթէ իր քուէարկելիք որոշումը՝ երեսփոխանի մը յայտնելիք կարծեաց ազատութիւնը ճնշման տակ պահելու ընտելութիւն եւ հանգամանք մ'ունենայ, պէտք է գիտնայ թէ՛ այդ վայրկեանին ինկած է Ընդհ. ժողովը եւ գոյութիւն չունի այլ եւս :

Թիւլպէնտճեան էֆէնտի ունէր հըրատարակեալ նաեւ ուրիշ խմբագրական յօդուածներ, որոց միոյն մէջ Ընդհանրաց Ըլիւր կոչած էր զԱզգային Ժողովը, ինչպէս յայտարարեցին յատենի աստ, բայց ասոնց քաղուածը չպիտի կրնայ տալ ձեզ նախաձեռնութեան դիւանս, վասն զի Լրագիր թերթին հաւաքածոյն ո՛չ Պատրիարքարանի դիւանատան և ոչ Ազգային Մատենադարանին մէջ կար պահուած :

Այս առթիւ մեր պարտքն է ըսել թէ՛ Լրագրի հրատարակութեանց ամբողջին ամփոփումը չէ որ ժողովիդ կը ներկայեմք, այլ անոնց ճաշակն ու ոգին ցոյց տալու չափ՝ մեր ձեռքն անցած մի քանի թերթերէն քաղուած մասեր : Եւ արդէն այս մասին ամբողջ հաւաքածոյ

մը, որ ի հարկէ ստուար բան կը լինէր, շատ հարկաւոր չդատեցինք:

Արդ՝ վերոյիշեալ հրատարակութիւնք մեծաւ հաւանականութեամբ տըխուր գողտփար մ'ընծայած ըլլալու էին Երեսփոխանաց՝ Թիւլպէնտեան էֆէնտիի, եթէ ոչ ազգասիրութեանը, դէթ ողջմտութեանն ու ուղղախոհութեանը մասին: Ուստի երբ խորքերդունտրութեան տեղեկագիրը կարդացուեր և անոր մէջէն Թիւլպէնտեան էֆէնտիին ելեր է արդիւնք ընտրութեան, Երեսփոխանք վարաներ են ընտրութեան վաւերել այնպիսի մի ընտրութիւն, որոյ ենթակայն այնուհետեւ Երեսփոխան դառնալով, ազգային բարձրագոյն ատենին մէջէն կրնար սկսիլ միաս առ թել ազգային շահուց, եթէ իւր շաւղին մէջ յարատեւէր անուղղայ: Եւ ահա ճիշտ այս վարանման պահուն՝ ընտրութեան տեղեկագրին յաջորդեր է Թիւլպէնտեան էֆէնտիի յանձնառագիրն, որ հետեւեալ խօսքերը հնչեր է Երեսփոխանաց ականջին:

Նր փութամ իմ հրապարակային շնորհակալութեան պարտականութիւնս հատուցանել խորքերդի վիճակը ներկայացնող ազգային գաւառական վարչութեան, վասն այն համարման եւ վստահութեան զոր վկայած է առ իս, առանց զիս անձամբ և ի մօտոյ ճանաչելու, այլ մի միայն իմ յայտնած գաղափարներէս ներշնչեալ եւ համակրեալ:

Եւ դարձեալ՝

«... Ընտրողքս ի հեռուս» իմ գաղափարներս եւ կարծիքներս միայն տեսնելով ու գնահատելով, Ազգ Երեսփոխանութեան արժանաւորութիւնն ինձ ընծայելու կը յօժարին, այնպէս որ սոյն ընտրութեամբ խորքերդի գաւառը յազգային խորհրդարան յղած կը լինի ոչ թէ իմ անձս, որ անձանօթ է իրեն,

այլ միջեւ ցարդ դաւանած սկզբունքս ու կարծիքներս, որք հանրաժանօր են, որով սոյն ընտրութիւնը... միանգամայն եւ խրախոյս ու քաջալեր մ'է ինձ, մի եւ նոյն գաղափարացս եւ սկզբանցս շաւղին մէջ անուղղութիւն յարատեւելու...»

Ներելի է կարծել որ այս խօսքերն աւելի ևս զօրացուցած լինին Երեսփոխանաց կասկածներն և տկարացուցած այն յոյսն թէ՛ Թիւլպէնտեան էֆէնտիի Երեսփոխանական աթոռին տիրանալը թերեւ առիթ ընծայէր նմա իւր ըսկզբունքն ուղղելու և յայնմ հետէ ազգագուտ ընթացք մ'ունենալու: Վասն զի նա իւր ընտրութիւնը նոյն իսկ իւր գաւառնած կարծեացն ու սկզբանցը վարձատրութիւն համարած էր, և նոցա մէջ անդրդուելի կերպիւ յարատեւելու առաջադրութեամբ պատրաստուած էր Երեսփոխանական աթոռոյ պատուանդանին վրայ ոտք դնելու: Հետեւեալ Երեսփոխանք հարկադրուած պէտք է լինէր՝ Ազգին սրբազան շահուցն առջև իրենց խղճին թելադրութեանն հետեւելու, և ժողովոյդ բարձրագոյն հեղինակութեամբ մերժելու այն ընտրութիւնն, որոյ միասակարութեանը վրայ ծանրապէս կասկածելու իրաւունք կատանային, ոչ միայն ընտրելոյն անցեալովն, այլ և նոյն իսկ նորա յանձնառագրին վերոյիշեալ մեկին և բացորոշ յայտարարութիւններովը:

Թիւլպէնտեան էֆէնտիի պատճառաբանութեանց շարքին մէջ սա ալ կերևի թէ՛ «Մերժման որոշումն ի բացակայութեան իւրում առանց բացատրութեան, առանց գատաւատանի և առանց գատաւճուի տրուած է»:

Բայց իրաց վերոյիշեալ վիճակն, ինչ

պէս կը տեսնէք, այս պատճառաբանութեան պարունակած կէտերէն և ոչ միայն հարկ թողած էր, այսինքն ոչ թիւլպէնտեան էֆէնտիին ներկայութեան, ոչ իրմէ բացատրութիւն ուղղելու, և ոչ իսկ դատաստան և գատաւճու փնտռելու: Վասն զի Ազգային ժողովոյ որոշումն ոչ մասնաւոր գատախաղի մը պահանջման վրայ հիմնեալ էր, ոչ թիւլպէնտեան էֆէնտիի նկատմամբ ժողովին համար անձանօթ և անստոյգ խնդիր մը յուղուած էր, և ոչ ալ Թիւլպէնտեան էֆէնտիի ազգային անհատական իրաւանց վայելմանէն զրկեալ ըլլալուն վրայ հիմնելով նորա ընտրութիւնը մերժուած էր: Այլ ներկայ Երեսփոխանաց խղճին ձայնն էր որ յիշեալ որոշումը թելադրած էր ժողովիդ, և այն գրեթէ միահամուռ, ինչպէս ատենագրութիւնք կապացուցանեն:

Թիւլպէնտեան էֆէնտի իւր խնդրագրին մէջ կը հարցնէ նաեւ թէ՛ «Սահմանադրութեան ընտրական օրէնաց տըրամադրութեամբ պահանջուած պայմաններէն զատ՝ ուրիշ ի՞նչ պայման կը պահանջուի Երեսփոխանի մը ընտրութեան օրինաւոր և վաւերական ճանցուելուն համար»:

Այս հարցմամբ Թիւլպէնտեան էֆէնտի ըսել կուզէ թէ՛ Սահմանադրութեան ընտրական օրինաց մէջ չկայ յօդուած մ'որ արդեւք դնէ իւր ընտրութեան վաւերացմանը դէմ: Եւ թերեւս գտնուին ոմանք որ Սահմանադրութեան տառին հետեւիլ ուղղելով փնտռեն թէ՛ օրինաց ո՞ր յօդուածին տրամադրութեամբ մերժուած է Թիւլպէնտեան էֆէնտիի Երեսփոխանական ընտրութիւնը:

Արդարեւ Սահմանադրութեան մէջ

չպիտի դտնեն յօդուած մ'որ ներկայ պարագային ուղղակի համապատասխանէ տաւապէս: Վասն զի օրէնագիրք չէին նախատեսած այսպիսի պարագայ մը, որ կարի հազուադէպ է և չէր կրնար նախատեսուիլ: Ուստի Երեսփոխանական ընտրելեաց հանգամանքը 68դ. յօդուածով զըծած ատեն բաւ համարեր են, երեսուն տարին լրացուցած, օսմանեան հպատակ Տէրութեան օրինացը տեղեկ և Ազգային դործոց հմուտ լինիլն ու գատապարտեալ և խելագար չլինիլը նշանակել, ենթադրելով անտարակոյս՝ որ ընտրեալներն ազգասիրութեան և արդարախոհութեան մասին անարատ պիտի ըլլան:

Եւ միթէ կարելի՞ էր ամեն ապագայ պատակահանութիւն նախատեսել, և արդեօք պէ՞տք էր մասնաւոր յօդուածներ խմբագրել մէն մի պատակահանութեան համար, քանի որ Սահմանադրութեան 70դ. յօդուածն, որ Երեսփոխանական հանգամանքն ու իրաւասութիւնը կը սահմանէ սկզբնապէս, իւրաքանչիւր Երեսփոխանի համար ազգախորհրդան, ուղղախոհութեան և արդարախոհութեան պայման կը դնէ բացորոշ կերպիւ:

Այս յօդուածն է ուղեցոյցն Ազգային ժողովին նախատեսեալ պարագայից մէջ տալիք որոշմանցն համար, քանի որ ինքն է միակ բարձրագոյն հեղինակութիւն ազգային օրինաց և իշխանութեան,

նոյն իսկ անոնք որ Թիւլպէնտեան էֆէնտիի արարքն ամենայն ներդրամութեամբ դատելով ազգային վիճակին նկատմամբ նորա թերի հմուտութեանը կը վերագրեն զայն, սոյն 70դ. և միանգամայն 68դ. յօդուածոց մէջ կը գտնեն ալ գայի գործոց հոսս ըլլալ տրամադրու-

թիւնն, իբր պայման ազգային երեսփոխանութեան:

Եւ եթէ այս տրամադրութիւնքն ալ անբաւական համարողներ գտնուին և որոշման օրինակութեանը վրայ իրենց կասկածը չկարենան վարատել, այսու ամենայնիւ չեմք կարծեր որ նոքա կարենան խղճել ըսելու թէ՛ ամեն անգամ որ ազգային շահուց պաշտպանութեան պարագայ մը ծագի, և ծագած խնդրոյն ուղղապէս վերաբերող յօդուած մը չդնեն երեսփոխանութիւնն օրինագրքին մէջ, պէտք է հրաժարի այդ շահուց պաշտպանութենէն և թողու զայն ընդ վտանգաւ, մինչեւ որ անոր յատուկ յօդուածն ունեւնայ: Չեր նախաձեռնութեան դիւանն այսօրինակ կարծիք մ'ը ոչ մէկ երեսփոխանէ սպասելու իրաւունք ունի, վասն զի ժողովը Սահմանադրութեան տառին հետեւողութիւնն հերքած է արդէն գործնականապէս:

Հետեւաբար խնդրոյն առջին մասին համար նախաձեռնութեան դիւանս կը կարծէ թէ՛

Ա. Ազգային ժողովուրդ իւր բարձրագոյն հեղինակութեամբ և օրէնսդիր իշխանութեամբ ձեռնհաս է՝ ազգային շահուց պաշտպանութեան համար՝ հարկ դատած տնօրինութիւնն ընելու:

Բ. Օրինաց ոգւոյն չհակառակող որոշում մ'ապօրինակօր չկրնար լինիլ:

Գ. Խղճի միահամուռութեամբ և արդարեւ տրուած վճիռ մը դատաւարութիւն չկրնար համարուիլ:

Դ. Յունիս 1 ի որոշումը խորհրդու գաւառին երեսփոխանական աթոռոյ իրաւունքը բռնաբարող բնութիւն չունի:

Ե. Թիւլպէնտեան էֆէնտի պատ-

ճառաբանութիւնքը դառնադին տալու, որութեան արդիւնք են, և իւր մերժման նկատմամբ ժողովոյդ որոշումն ապօրէն և անիրաւ լինիլ չեն ապացուցանէր:

Ուստի կեղքակայէ որոշել թէ՛

Խարբերդու երեսփոխանական ընտրութեան նկատմամբ 1879 Յունիս 1 ի նստին մէջ տրուած որոշումը՝ տիրող օրինաց համաձայն կատարուած իրողութեան, և այս պատճառաւ՝ կրկին անգամ խնդրոյ նիւթ չկրնար լինիլ ըստ օրինի:

Խնդրոյն երկրորդ մասին անցնելով, այսինքն թիւլպէնտեան էֆէնտի ազգային անհատական իրաւանց, այն է՝ ընտրողութեան և ընտրելութեան իրաւունքին գալով, ձեր նախաձեռնութեան դիւանը կը նկատէ որ թէ և տրուած որոշումը խարբերդու երեսփոխանական ընտրութեան բեկանումը միայն կենթադրէ, բայց ըստ որում ոչ թէ ընտրական գործողութեանց թերութեան պատճառաւ, այլ ընտրելոյն գործողութեան անհամաձայնութեան պատճառաւ տրուած է այն, կարելի է կասկածիլ և մինչև իսկ հետեւցնել թէ՛ թիւլպէնտեան էֆէնտի զրկուած ըլլայ միանգամայն այլ ևս ընտրող և ընտրելի ըլլալու իրաւունքէ:

Այսու ամենայնիւ այս հեռուութիւնը ճիշդ չթուիր մեզ, վասն զի թիւլպէնտեան էֆէնտի ազգային շահուց հակառակ նկատուած վերոյիշեալ հրատարակութիւններն ըրած ըլլալով հանդերձ, իւր ընտրող և ընտրելի ըլլալու իրաւունքը խնդրոյ ներքեւ չէր ձգուած մինչև իւր ընտրութեան մերժումը, և թերևս Ազգային ժողովը այս անգամ ալ ներողամիտ կը գտնուէր նորա անցելոյն, եթէ զրկած յանձնառագրին պարունակութեանն ու ոճին նայելով, տա-

րօրինակ դատնապ'ը մը չ'կատուէր այն, իւր նախորդ ընթացիցն յարատեւութեանն համար:

Բայց քանի որ՝ երեսփոխանական ընտրութեան բեկանումն որոշուած առանձին անհատական իրաւանց կէտը նկատուած է առեր ժողովը և անոր վրայէն լուծեամբ անցեր է, հարկ է հիմ մը դնել այս մասին յարուցեալ կասկածները վարատելու և թիւլպէնտեան էֆէնտի դիւրքը ճշդելու համար, ինչպէս որ ինքն ալ կը պահանջէ ճշդել:

Վասն զի թէ և յիշեալ կասկածանայ մէջ շատ յառաջ գացողներ և մինչև իսկ պիւղոններ կրնան գտնուիլ, որ յիշեալ որոշմամբ դադարեալ ըլլայ նաև թիւլպէնտեան էֆէնտի ընտրողութեան և ընտրելութեան իրաւունքը, բայց առնիւրաւ չէ առարկել որ թիւլպէնտեան էֆէնտի թերևս դադարի յարատեւելապաշտպան իւր դաւանած կարծեացն ու սկզբանց մէջ, և ուրիշ անգամ մ'ընտրուած ատեն՝ իւր յանձնառագրին այս անգամու պէս տեսակ մը ծանուցագրի ձև չունենալով և տարբեր իմաստ Զպարունակելով, ընտրութիւնը ժողովիդ համար վաւերելի դառնայ:

Հետեւաբար թիւլպէնտեան էֆէնտի իւր ազգային անհատական իրաւանց վիճակը ճշդելու համար ըրած պահանջումն իրաւացի կը գտնէ ձեր նախաձեռնութեան դիւանն, և զայն գահացնելու համար մասնաւոր քննութեան մը հարկ կը տեսնէ. որոյ գործնական միջոցն այն կը թուի որ՝ վարչութեան Գաղաքական ժողովն ի քննի առնու թիւլպէնտեան էֆէնտի Զհրատարակութիւնքն ի մասին ազգային խնդրոց, նորա բացատրութիւնները լսէ, և ըստ այնմ թիւլպէնտ-

եան էֆէնտի տյուհետե ազգային անհատական իրաւանց վայելման մասին իւր կարծիքը տեղեկագրէ առ Ազգային ժողովը, վերջնական որոշումն ընդունելու համար:

Ուստի կեղքակայէ,

Սրբազան նախագահին յանձնարարել՝ թիւլպէնտեան էֆէնտի ազգային վիճակի կացութեան քննութիւնն, ի ձեռքն վարչութեան Գաղաքական ժողովոյ, և ընդ նմին՝ նորա այսուհետեւ ընտրողութեան և ընտրելութեան իրաւանց վայելման մասին՝ Գաղաքական ժողովոյն կարծեաց տեղեկագրութիւնն առ Ազգային ժողովը:

Ատենապետ Է. Տեղեկաբեր

Յ. Միլեհմ — Գուլի

Մ 2օպանեան Մ. Ռաֆայելեան

26 Հոկտ. 1879

ԱՋԴԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Տ.	Մկրտիչ	Ս.	Արքեպս.	Խորմեան	Ա.	Ապենապետ
2	Տ.	Խորէն	Ս.	»	Նար-պէ		
3	Տ.	Կարապետ	Ս.	Եպս.	Սերովբեան		
4	Տ.	Մատթէոս	Ս.	»	Խղմիրլեան	Բ.	Ապենապետ
5	Տ.	Ամբրոսիոս	Ծ.	Վրդ.	Ռուբինեան		
6	Տ.	Գարեգին	Ծ.	»	Թաթարեան		
7	Տ.	Ներսէս	Ծ.	»	Ասլանեան		
8	Տ.	Պօղոս	Ծ.	»	Խօլտամեան		
9	Տ.	Արիստակէս	Աւագ	Քհն.	Մամբրէեան		
10	Տ.	Խորէն	»	»	Փէհլիվանեան	Բ.	Ապենապետ
1	1Տ.	Սահակ	»	»	Տ. Սարգիսեան	Ա.	Ապենապետ

ՔՐԴԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Առաքել	Էֆէնտի	Ալթուն	Տիւրբի	Ա.	Ապենապետ
2	Գէորգ	»	Գըլլճեան			
3	Գարրիէլ	»	Եսա եան			
4	Լօղօֆէթ	»	Պալեօղեան			
5	Մարտիրոս	»	Միւհէնտիսեան			
6	Մկրտիչ	»	Յրէնկեան			
7	Յակոբ	»	Զօպանեան			
8	Սահակ	»	Ղազարոսեան			
9	Ստեփան	»	Պէլիկճեան			Բ. Ապենապետ
10	Խաչատուր	Խան	Տ.	Նէրսիսեան		

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. Խնդիր առժամայ փոխադրութեան խորհրդարանի (միջադէպ)
2. Վաւերացումն ժ. նիստի տաճնադրութեան
3. Բացակայութիւն Երեսփոխանաց
4. Երկրորդ Ատենադպիր Գ. Զեբադէֆէնտի հրաժարականը
5. Երեսփոխան Մ. Քաջամաճեան Էֆէնտի հրաժարման խնդիրը
6. Համարակալութեան դիւանի տեղեկագիրը
7. Իրաւասութեան դիւանի տեղեկագիրը Տիւրանակերտի խնդրոյն վրայ

Տախաճեռնութեան դիւանի տեղեկագիրը Խարբերդի Երեսփոխանական ընտրութեան խնդրոյն վրայ

Գին 2 որոշ

ՍԵՓՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ՍԶԴԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՅԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի եւ Ղալարիոյ Ս. Լուսաւորիք
եկեղեցւոյ բանկալը եւ Հայ զբաղմանոց քով